


Մ. Խանգուշյան.

Մեղակարմնոքյան.

Գործակալան

Չեռակալ.




Երևան - 1927.

24

Մ. ԽԱՆԶԱԴՅԱՆ

6

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՋԵՌՆԱՐԿ



ՅԵՐԵՎԱՆ — 1927

638.1
ku-23

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԹԵՐԸ

1. Ուղեցույց անճառային աշխատավորի 50 կ.
2. Ս. Շագունց.—Մեր անելիքները (սպառված) 20 »
3. Հ. Փրոմյան յեվ Ա. Մելնոյան.—Ինչո՞ւ ձեռնտու յի գործարանում յուզ և շվեյց. պանիր պատրաստել 3 »
4. Հ. Փրոմյան.—Խոտաբույսերը և նրանց մշակության յեղանակները (սպառ.) 10 »
5. Խ. Ավգարեցյան.—Հ. Ս. Խ. Հ. Հողային Որհնագիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն առաջին, աշխատավորական հողդատագործություն (սպառ.) 40 »
6. Պ. Հեֆիմյան.—Թթենու մշակությունը 10 »
7. Պ. Հեֆիմյան.—Շերամի վորդը, նրա կերակրելն ու խնամքը 10 »
8. Խ. Յերիցյան.—Կաթնատնտեսություն գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) 1ռ. 50 »
9. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—Ծխախոտի մշակությունը 20 »
10. Ս. Ֆրիզով.—Տաք պտղամ անասնապահին 20 »
11. Խ. Յերիցյան.—Անհատական, թե՛ կոոպ., կաթնատնտ. 10 »
12. Հ. Հաուսթյուն.—Բատրակ, կնքիր պայմանագիր (շափ.) 5 »
13. Մ. Թումանյան.—Շարքացան և նրա նշանակությունը 15 »
14. Խ. Յեր-Ներսիսյան.—Ինչպե՞ս մշակել խաղողի այգիները (28 նկարով) 35 »
15. «Յերեսներս գետի գյուղ».—Անդրկովկասյան Յերկրային կոմիտեի բանաձևը գյուղացիական հարցի մասին, Ս. Շագունցի նախարանով (սպառված) 15 »
16. Հայաստանի Կոմմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Չորրորդ Պլենումի Բանաձևերը (սպառված) 15 »
17. Ռ. Արմենյան.—Խոշոր յեղջյուրավոր անասունների ժանտախտը 15 »
18. Հ. Ազատյան.—Դյուղատնտեսական բանվորությունը և միջազգային կոմմունիստական շարժումը 40 »
19. Ն. Խան-Աղյան.—Ուղեցույց արդյունավետ խողարուծություն 15 »

Մ. ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՄԵՂՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՋԵՌՆԱՐԿ

ՀԱՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1927

56762-62

Այս փորձիկ գրքույկն իր նպատակին հասած չլինի, յեթե կարողանա զմեն ժամանակավորապես յեւ մասամբ բավարարել այն խոշոր պահանջը, վոր առաջադրուած է մեր արագ յեւ ան-
րնդհատ զարգացող մեղովապահությունը, մինչև վ վոր նրապարակ
կգան ափելի լրիւ, ափելի մշակված յեւ մեր յերկրի պայման-
ներին համապատասխան գրքեր:

Այս գործույթը կազմելիս մենք նկատի չենք ունեցել մեր գյուղացիական միջավայրը չեմ աշխատել ենք տալ մեղվապահության ամենապարզ ձևերը:

Նկատի ունենալով, Վոր մեր գյուղացիության մեջ դեռևս չի մտնել ուսուցիչական մեղվապահության տեխնիկան, մի շարք դեպքերում մենք տեսնում ենք տնային միջոցներ, վորոնք մասնագետներին կարող են չբավարարել, բայց, թվում է թե՛ մեր գյուղացուն ոգտակար պիտի լինեն:

Տեղ-տեղ նկատվող կրկնությունները դիտավորություններ են կատարել:

«Մեղուների դերը բույսերի բեղմնավորման մեջ» գլուխն ավելացնելուն առիթ տվեց այն հանգամանքը, վոր մեր յերկրի մի յերկու շրջանում՝ Ապարանում յեւ Փամբաւի Ղալթախի գյուղում գյուղացիք փայտերով ու հայհոյանքներով են դիմավորում իրենց գյուղերը տեղափոխվող մեղվապահներին:

Ժամանակ է, վոր մեր գյուղացին հասկանա մեղվի ոգտակարութիւնը յեւ ձեռք բաշի դեպի մեղվապահներն ունեցած անբարյացակամ վերաբերմունքից:

Ավելորդ չենք համարում մատնանշել մի կարեւոր հանգամանք յեւս—դա մեղվաբուծական տերմինոլոգիայի խնդիրն է:

Մեր բազմաթիւ գալառաբարբառները մեղվաբուծական տարբեր տերմիններ ունեն յեւս մի գալառում գործածվող տերմինը դժվար է հասկացվում մյուս գալառում: Բնական է, վոր այս պայմաններում գիրք գրող մեղվապահը պահպանի իր գալառի տերմինները: Այնինչ անհրաժեշտ է, վոր մեղվաբուծական գրքերը գրվեն միասնական տերմինոլոգիայով:

Բոլոր գալառներից հրավիրված գիտակից մեղվաբույծներին խորհուրդը պիտի լուծի այս խնդիրը: Մ. Խ.

Ցանկանալով հրատարակել մեղվաբուծության անթերի յեւս խնամքով մշակած մի ձեռնարկ, խմբագրութիւնս նախքան հրատարակելը, ընկ. Մ. Խանգաղյանի ձեռագիրն ուղարկել է գալառներում աշխատող մեր մի քանի մեղվապահներին, վորոնցից մի քանիսը՝ Հակ. Միրաքյանը (Գորիս), Տ. Ասլանյանը (Դիլիջան) յեւս Ա. Բարխուդարյանը (Յերեւան) ուղարկել են իրենց դիտողութիւնները, վոր ի նկատի են առնված գրքի վերամշակութիւն ժամանակ: Այդ բոլոր ընկերներին խմբ.-հրատարակչական կոլեգիան իր շնորհակալութիւնն է հայտնում:

Խմբ.-Հրատ. Կոլեգիա

1. ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Մեղվապահները, նաեւ վոչ մեղվապահներից շատերը դիտեն, վոր փեթակում կան մայր, բանվոր մեղուներ, բոռեր:

Մեղվի յուրաքանչյուր ընտանիք ունի մի մայր, մի քանի հազար, կամ մի քանի տասնյակ հազար բանվոր մեղու, նայած տարւա ժամանակին և փեթակի ուժին, և վորոշ քանակութեամբ բոռ՝ տարւա վորոշ ժամանակ, այսինքն՝ զարնան կիսից մինչև զլիսավոր բերքի վերջը: Սրանց մասին կխոսենք առանձին գլուխներում:

2. Մ Ա Յ Ր



Մայր

Մոր միակ զործը փեթակում ձու ածելն է: Մայրն սկսում է ձու ածել վաղ զարնանից, նույնիսկ, յերբեմն ձմեռվա վերջին ամսից, առաջին շրջանում մայրն որեկան մի քանի հաւ ձու յեւ ածում, իսկ այնուհետեւ աստիճանաբար ավելացնելով ուժեղ բերքի ժամանակ, որեկան հասցնում է 2-3 հազարի և նույնիսկ ավելի, յեթե մայրը ջանիլ է և պողաբեր:

Մոր ածած ձվերից է, վոր փեթակի բնակչութեան թիւը կաժաց-կաժաց աճում է, և զլիսավոր բերքի սկզբին փեթակում լինում են հսկայական թիւով բանվոր մեղուներ, վորոնք մեղր են հավաքում և իրենց տիրոջը օր-դյունք տալիս:

Պարզ է ուրեմն, թե ինչ նշանակութիւն ունի մայրը մեղվի ընտանիքում:

Մայրն ունի յերկու շատ դարգացած ձվաբան, նման հովի ձվաբանին կամ ինչպէս ասում են՝ բուռնութիւն: Այդ

ձվարանները մօր ամբողջ կյանքի ընթացքում կարող են արտադրել մի քանի միլիոն ձու. այդ ձվերի մեծ մասը մայրն ածում է իր կյանքի ընթացքում՝ հինգ տարում:

Մայրը յերկու տեսակ ձու յե ածում—բեղմնավորված ձվեր, վորոնցից դուրս են գալիս բանվոր մեղուներ և չբեղմնավորվածներ, վորոնցից դուրս են գալիս բուրեր:

Մայրը սովորաբար հինգ տարուց ավելի չի ապրում: Այս հասակում մայրը կամ մեռնում է բնական մահով, կամ մեղուները նոր մայր են հանում և հնին վոջնչացնում: Մայրերը յերբեմն մեռնում են 3 կամ 4 տարեկան հասակում:

Մեղվապահի համար միևնույնը չէ, թե մայրն ինչպիսի հասակ ունի. յերեք տարեկանից ավելի հասակի մայրերն այլևս քիչ պետքական են, վորովհետեւ 4-րդ տարուց սկսած այնքան քիչ են ձու ածում, վոր մեղվի ընտանիքը չի կարողանում լավ դարգանալ և ցանկալի արդյունքը տալ: Այսպիսով՝ մեղվանոցում յերեք տարեկանից ավելի հասակ ունեցող մայր չպետք է պահել:

Բացի այն, վոր ձվերի բանակը պակսում է, սպասվում է և բեղմնավորման ժամանակ բուրի՝ նրան տված սերմի քանակությունը և մայրը ծեր հասակում մեծ մասամբ ածում է չբեղմնավորած ձվեր, վորոնցից դուրս են գալիս բուրեր, մի հանգամանք, վոր ամենեկին ցանկալի չէ:

Մայրը նույն բանվոր մեղուն է, բայց իր մարմնի չափերով և ձվարաններով ավելի դարգացած. մայրն ել նույնպիսի ձվից է ծնվում, ինչ վոր բանվոր մեղուն:

Ինչպես է պատահում, վոր թե մայրը և թե բանվոր մեղուները միատեսակ ձվերից են դուրս գալիս:

Ահա թե ինչպես:

Մայր ստանալու համար բանվոր մեղուներն ընտրում են սովորական բջիջներից մեկը. նրան շրջապատող բջիջները քանդում են և ձվի շուրջը շինում մի մեծ բջիջ, վոր շատ նման է կովի պտուկի, կամ կաղնի, կամ թե չէ՝ մայրը ձուն ածում է նախորդ շինած մայրաբջիջի մեջ:

Յերբ ձուն ձեղքվում է և դուրս է գալիս փոքրիկ սպիտակ վորդը, բանվոր մեղուներն սկսում են նրան կերակրել ընտիր և առատ կերով, և վորովհետեւ բջիջն ընդարձակ է, այդ պատճառով վորդը սովորականից ավելի յե դարգանում մարմնով. միաժամանակ դարգանում են նաեւ սեռական գործարաններն և ձվարանները. այսպիսով՝ ստացվում է լիովին դարգացած եգ, վորն ընդունակ է սերունդ առաջացնելու և վորին մենք իրավամբ մայր ենք անվանում:

Մայրացու վորդն իր կատարյալ դարգացման հասնում է 16-րդ օրը, յերբ նա կրծում ծակում է իր մոմեղեն բանդը և լույս աշխարհ դուրս գալիս:

Պատահում են շեղումներ. այսպես՝ դարնան ցուրտ յեղանակին մայրը մի քիչ դանդաղ է դարգանում և բջիջից դուրս է գալիս 17-րդ օրը և ընդհակառակն՝ ամրան տաք օրերին նրա դարգացումն արագանում է և նա հասունանում է 15 օրում:

Մայրն իր արտաքինով տարբերվում է բանվոր մեղվից հետեյալ նշաներով. նրա մարմնին պակաս չափով յերկար է բանվոր մեղվի մարմնից, փորն ուսուցիկ է, թեվերը՝ մարմնի համեմատությամբ՝ կարճ են, վոտքերը՝ յերկար:

Ծերացած մօր թեկերը լինում են չոված և բրբրված, մարմնի խավը թափված, իսկ փորը բարակ և փայլուն, շարժումները՝ դանդաղ: Ջահիլ մօր թեկերը դասավորված են լինում իրար շատ մոտ, համարյա կպած. փորը խավոտ է և առուգ, շարժումներն աշխույժ են:

Վորպեսզի մայրն սերունդ տալու ընդունակ դառնա, պետք է գուգավորվի արվի (վորձ) հետ, ինչպես այդ վերաբերում է ամեն մի եգ կենդանու:

Յեվ ահա նոր դուրս յեկած մայր մեղուն 3—15 օր փեթակում մնալուց և կազդուրվելուց-ամրապնդվելուց հետո դուրս է թռչում փեթակից բուրին հանդիպելու: Այսպիսի թռիչքի համար նա ընտրում է տաք և խաղող օր: Բուրերից ամենատեղեղն և կենսունակը կեսօրվա ժամերին

մայր մեղվի հետեից ընկած՝ հասնում է նրան ուղի բարձրունքներում և զուգավորվում նրա հետ: Մայրը վերադառնում է իր բունը և 2—9 օրից հետո սկսում է ձուածել:

Մայրն իր կյանքի ընթացքում մի անգամ է միայն զուգավորվում բոռի հետ: Բոռը նրան այնքան սերմ է տալիս, վոր բավականանում է մօր ամբողջ կյանքի ընթացքում: Սերմը տեղավորվում է ձվարանների մօտ գաղնփող մի պարկում և ձուն անցնելիս՝ բեղմնավորում է վերջնիս:

Յեթե մօր առաջին թռիչքն անհաջող է անցնում, այդ դեպքում նա կրկնում է:

Յեթե մի ամսվա ընթացքում, այս կամ այն պատճառով, չի հաջողվում բոռի հանդիպել, մայրը դադարեցնում է իր թռիչքները և այնուհետև միշտ էլ ամուրի մնալով բացառապես բոռի ձու յե գնում: Այսպիսի մօրը մենք ընդամայն կամ կոտածին մայր ենք անվանում: Այսպիսի մայրն անպետք է, ուստի պետք է նրան փոխարինել բեղմնավորված մօրով:

Մայրն իր ամբողջ կյանքում յերկու դեպքում է դուրս գալիս — մեկ բեղմնավորվելու համար և մեկ էլ ձաղի հետ՝ փեթակը ձագ տալիս:

Մայրն էլ բանվոր մեղուների նման զինված է խայթոցով, բայց այդ խայթոցը նա գործ է ածում ուրիշ մայրերի հետ կռվելիս միայն, իսկ մարդու և վոչ էլ կենդանիների դեմ յերբեք չի գործածում: Նրա թունաբեր դեղձերը թույլ են զարգացած: Մայրը չունի նաև ծաղկափողի հավաքող խողանակներ և յետի ազդերի վրա փոսիկներ՝ ծաղկափողին դարսելու համար:

Մօր դրած ձուն առաջին օրը բջիջի հատակին ծայրի վրա տնկված է լինում, յերկրորդ օրը նա թեքվում է և յերրորդ օրը պտտում:

Թե ինչպես է կառարվում մօր զարգացումը, յերևում է հետեյալ թվերից.

Ձուն աստիճանաբար թեքվում և պտտում է 3 օրում	
Վորդի կերակրումը տևում է	6 »
Ձու գնելուց մինչև մայրաբջիջի կնքելը	9 »
Մայրը կնքած զրուծյամբ մնում է	8 »
Ձու գնելու օրից մինչև մօր դուրս գալը	16 »
Մայրաբջիջից դուրս գալուց հետո դուրս է թռչում բեղմնավորվելու	3—15 »
Բեղմնավորվելուց հետո ձու գնելն սկսում է 2—9	»
Այսպիսով՝ ջահիլ մայրն ամենահաջող դեպքում կարող է ձու գնել, հաշվելով այն ձվի առաջին օրից, վորից ինքն է դուրս յեկել	21 օրից հետո

3. ԲԱՆՎՈՐ ՄԵՂՈՒ



Բանվոր մեղու

Փեթակում բոլոր աշխատանքները բանվոր մեղուներն են կատարում: Նրանք մեղր, ծաղկափողի, ջուր են կրում, մսմ են արտադրում, մեղրահացեր են շինում, կերակրում, տաքացնում և խնամում են նոր սերնդին — վորդերին, հսկում և կերակրում են մօրը, փեթակը պաշտպանում են հարձակումներից, մի քանի ծառերից և խոտաբույսերից բերած ակնամամուլ ծածկում են փեթակի ավելորդ անցքերը, ցրտերից և զոդերից պաշտպանվելու համար արկանոցի առաջ նույն ակնամամուլից պատնեշներ են շինում:

Բանվոր մեղվի վորդը, հաշվելով ձու դրած օրից, կատարելապես զարգանում և ծնվում է 21-րդ օրը: Ջահիլ մեղուները 8-րդ կամ 10-րդ օրը փեթակից դուրս են գալիս շրջապատին ծանոթանալու, այս լինում է կես օրին և այս է, վոր մենք անվանում ենք ծաղկադուր: Այսպիսի ձագխաղ մի քանի անգամ կատարվելուց հետո, նրանք դաշտ են թռչում աշխատանքի:

Բանվոր մեղուն ունի մի շարք բարդ գործարաններ, վորոնցից դուրկ են մայրը և բոռը: Փօրի վրա գտնվող

ողակները արանքից նա մոմ է արտադրում։ Այս արանք-
ներից շատ բարակ և շատ փոքրիկ մոմաթերթիկներ են
դուրս գալիս։ մյուս մեղուներն իրենց ծնոտներով անմիջա-
պես բռնում են այդ թերթիկները և գործադրում մոմահա-
ցեր շինելու համար։

Մոմը մեղվի ճարպն է. նա մոմ կարող է արտադրել
այն ժամանակ միայն, յերբ լավ սնվում և չաղանում է։
Այս է պատճառը, վոր մոմն արտադրվում է բերքի ժա-
մանակ։

Բանվոր մեղուն ունի գեղձեր-գործարան, վորտեղ նրա
կերած մեղրից և ծաղկափուռաց պատրաստվում է այն կաթ-
նանման հյութը — խյուսը, վորով կերակրվում են վորդերը։

Այս յերկու կարևոր աշխատանքը՝ վորդերի կերակ-
րումը և մոմ արտադրելը, կատարում են ջահիլ մեղունե-
րը, ուրեմն՝ նախքան զբաղ աշխատանքի գնալը, ջահիլ-բան-
վոր մեղուները վոչ միայն փեթակում անգործ չեն նստում,
այլև կատարում են այնպիսի կարևոր աշխատանքներ, ա-
ռանց վորոնց մեղվի բնական զոյուլթյունն անհնարին
կդառնար։ Նրանք նախ և առաջ վորդի վրա նստած պահ-
պանում են պահանջվող տաքությունը, ապա արտադրում
են մոմ և խյուս՝ վորդերին կերակրելու համար։ Այս մոմը
և խյուսն արտադրել կարող են միայն ջահիլ մեղուները,
վորովհետև նրանց համապատասխան գործարանները թաքմ
են և արտադրելու ընդունակ, այնինչ հասակով մեղունե-
րը ժամանակի ընթացքում, յեթե վոչ լիովին, գոնե խո-
շոր չափով կորցնում են այդ ընդունակությունը։

Շատ կարևոր և հետաքրքրական գործարան են հան-
դիսանում բանվոր մեղվի գլխի վրա ցցված յերկու շոշա-
փուկները, բարակ մազի նման, մի քիչ հաստացած ծա-
րերով։ Հոտառության և շոշափուկների զգայարանները գտն-
վում են շոշափուկների ծայրերին։ Յենթադրում են, վոր
խողովթյան զգայարանն էլ շոշափուկների վրա յե գտն-
վում։ Այս հարցը գեռևս վերջնականապես պարզված չէ։

Շոշափուկները չափազանց կարևոր են մեղվի հա-

մար. այդ պարզ յերևում է նրանից, վոր յերբ շոշափուկ-
ները կտրում են, մեղուն միանգամայն անպետքանում է
վոր և է գործի համար։

Գլխի վրա՝ կողքերից տեղավորված են մի գույզ խո-
շոր, բարդ աչքերը. ճակատին յեռանկյունածև զատվոր-
ված են պարզ կազմություն ունեցող յերեք աչքերը։

Յենթադրվում է, վոր մեղուն շատ հեռու յե տեսնում։

Այստեղ չենք խոսի մեղվի բերանի և լեզվի կազմու-
թյան մասին, թեև շատ հետաքրքրական է. կասենք միայն,
վոր մեղուն լեզվի ավերը միացնելով դարձնում է խողո-
վակ, յերբ ծաղիկներից մեղր է ծծում և բաց է անում
ու տափակ գործ ածում, յերբ լիզում է։

Փորի առաջին մասում գտնվում է մեղվի նախաստա-
մոքսը-քուչը, վորի մեջ նա հավաքում է մեղրը և սուռն
դառնալով՝ հեռ վորձկում բջիջների մեջ։

Հետևի վոտների ազդերի վրա բանվոր մեղուն ունի
մի-մի փոսիկ, վորոնց մեջ ճարպկորեն դարսում է ծաղ-
կափուշին՝ իր թափերի ծայրերի խողանակներով։

Բանվոր մեղուն գինված է խայթոցով, վոր անխտիր
գործ է ածում բոլոր միջատների և կենդանիների դեմ։
Բանվոր մեղուների խայթոցներին յերբեմն զոհ են գնում
շներ, ձիեր, եղեր և այլն։

Թե վորքան ժամանակ է ապրում մեղուն, դժվար է
ասել, վորովհետև նա բնական մահով չի մեռնում։ Մե-
ղուների մի մասը մեռնում է լարված ու ծանր աշխա-
տանքից, իսկ մի մասը՝ զոհ է գնում քամիներին, թռչու-
ներին և այլն։ Բերքի շրջանում՝ 40—50 օրվա ընթաց-
քում հին մեղուներ համարյա թե չեն մնում փեթակում։
Նրանք վոչնչանում են և նրանց փոխարինում են նորերը։
Չմեռը սուռն դրած մեղուներն են միայն, վոր պարուն են
հասնում։

Ընդունված է կարծել, վոր մեղուն յերեք վերստից
ավելի չի թռչում. բաց կան որինակներ, յերբ մեղունե-

ըր թռել են մինչև 7 վերտա, յերբ մոտակա վայրերում մեզր չեն գտել:

Բանվոր մեզվի զարգացումը—

Ձուն աստիճանաբար պառկում է 3 որում

Վորդի կերակրելը տևում է . . . 5¹/₂ որ

Ձու զնելու որից մինչև բջիջի

կնքելը 8¹/₂ »

Վորդը կնքած գրությամբ մնում է 12 »

Ձու զնելու որից մինչև մեզվի

բջիջից դուրս գալը 20¹/₂—21 »

4. Բ Ո Ռ



Բ ո ո

Բոռի միակ գործը փեթակում այն է, վոր մորը բեղմնավորի: Գյուղացիների մեջ տարածված այն կարծիքը, վոր իբր թե բոռերը ջրկիրներ են, միանգամայն սխալ է. այդ գործն անելու համար նրանք վոչ մի հարմար գործարան չունեն:

Բոռերը փեթակներում յերևում են ապրիլ ամսի վերջերից, յերբեմն մի քիչ ուշ, նայած յեղանակին, տեղի բարձրության և մոր հասակին: Ծերացած մայրեր ունեցող փեթակներում բոռեր շուտ են յերևում, վորովհետև, ինչպես ասացինք, բոռերը դուրս են գալիս չբեղմնավորված ձվերից, իսկ սերմը պակասելու պատճառով այդպիսի ձվեր ծեր մայրերն ավելի շատ են անում:

Բոռերը չափազանց թանկ են նստում մեզվի ընտանիքին, վորովհետև նրանք շատակեր են և անընդհատ մեզր են ուտում: 10—12 մեզվի բերած մեզրը հազիվ մի բոռ է կշտացնում: Բավական է ասել, վոր 2000 բոռը մի սեզոնում, այսինքն՝ ամառվա ընթացքում մոտ 30 ֆունտ մեզր են վոչնչացնում: Իսկ մեր մեզվանոցներում չափազանց շատ կան այնպիսի մեզվի ընտանիքներ, վորոնք վոչ թե 2000, այլև ավելի թվով բոռեր ունեն: Հասկանալի

յև ուրեմն, թե ինչ չարիք և բոռի շատությունը փեթակում: Նրանց թիվն ամենաշատը՝ ախտի լինի 200—300:

Բոռերի զեմ գործադրվող միջոցները, ինչպես նրանց վորդերի զլուխները զանախով կտրելը կամ բոռ բռնող գործիքների բանեցնելը, մասամբ միայն թեթևացնում են չարիքը: Այս ձևերով մենք վոչնչացնում ենք բոռերին կամ նրանց վորդերին այն ժամանակ միայն, յերբ նրանք արդեն ահազին կերակուր են գործածել և ժամանակ է կորել: Բացի դրանից, վերը հիշած միջոցների գործադրությամբ նոր բոռերի առաջ գալն էլ չենք արգելում:

Կովի ամենալավ միջոցը՝ ջահիլ մայրեր պահելն ու բոռահացերը վոչնչացնելն է:

Բոռերի կյանքը յերկարատև չէ. հենց վոր զլխավոր բերքն սկսում է զգալի կերպով պակասել, հենց իրենք մեզուններն սկսում են հալածել և կոտորել նրանց: Բոռերին բշում են հացերի վրայից զեպի փեթակի վոր և է անկյուն, կամ ուղակի դուրս են անում փեթակից. արկանուցի մոտ նրանք խմբվում են և սովամահ լինում: Այն բոռերը, վորոնք փորձ են անում մոռենալու մեղրին, սպանվում և դուրս են շարվում: Այսպես է վերջանում ձրիակեր բոռերի պարապ և անհոգ կյանքը:

Բերքը վերջանալուց հետո, յեթե բոռեր են մնում փեթակում, կնշանակի այդ փեթակը կամ մայր չունի, կամ մայրը բեղմնավորված չէ:

Բոռը հասունանում և դուրս է գալիս բջիջից 24 ուրում, այսպես.

Ձուն աստիճանաբար պառկում է 3 որում

Վորդի կերակրումը տևում է 6 որ

Ձու զնելու որից մինչև կնքելը 9¹/₂ »

Կնքած բջիջում վորդը մնում է 12 »

Ձու զնելու որից մինչև բոռի դուրս գալը 23¹/₂ »

Ծնվելուց հետո բոռը 6 որ փեթակից դուրս չի գալիս, այնուհետև նա դուրս է գալիս բոռախաղի և 32—38

որից հետո միայն, հաշվելով ձու դնելու օրից, նա դուրս ե թնչում մօր հետ գուգավորվելու:

5. ՄՈՍԵՂԵՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ինչպես ասացինք՝ ջահիլ մեղուները մոմ են արտադրում. այս մոմից են շինվում այն դարմանալի մոմահացերը, վոր մենք տեսնում ենք վեթակում: Մոմահացերը բաղկացած են կանոնավոր վեցանկյուն բլիշներից, վորոնց թիվը հասնում է հազարների (10.000 բլիշ Դադան-Բլատտի բնի շրջանակի վրա): Բլիշները լինում են 4 տեսակ՝ մեղվի բլիշներ, բուռբլիշներ, վոր առաջիններից խոշոր են, մայրաբլիշներ, վոր խոշոր են և պտուկի նման կախված մոմահացերից և անցման բլիշներ. սրանք շինվում են այն ժամանակ, յերբ մեղվի բլիշներ ունեցող կիսատ մոմահացին մեղուները կցում են բուռբլիշներ:

6. Մ Ե Ղ Ր

Մեղրն այն հյուլն է, վոր մեղուն հավաքում է բաղմաթիվ ծառերի և խոտաբույսերի ծաղիկներից: Այս հյուլը բնական վիճակում կոչվում է նեկտար, և շատ ավելի ջրի յե, քան մեղ զիտցած մեղրը: Նեկտարը մեղի նախաստամոքսում վորոշ փոփոխության ե յենթարկվում և ապա բլիշների մեջ առաիճանաբար թանձրանալով՝ դառնում է մեղր:

Մեղրը մեղուների բնական և առողջարար կերակուրն է, ուստի պետք է աշխատել չփոխարինել նրան վոր և ե ուրիշ կերով, թեկուզ շաքարով: Մեղուներին այլ տեսակի հյուլներով պիտի կերակրել այն զեպքում միայն, յերբ ուրիշ յեղք չկա:

Անտառոտ տեղերում չորային տարիներին, յերբ ծաղիկները նեկտար չեն տալիս, մեղուները հարկադրված ծառերի տերեւներից մեղրացող-մանանա յեն հավաքում: Այս մեղրը փաստակար հատկություն ունի և մեղուների փորլուծություն ե առաջացնում: Յեթե մեղուները ներս են

ձմերուտ, այսպիսի մեղրն իրրե ձմեռվա պաշար թողնելը վտանգավոր ե և այն պիտի փոխարինել լավ մեղրով, կամ յեփված թանձր շաքարաջրով:

Շաքարաջուրը պիտի պատրաստել հետեյալ ձևով. յեռացող ջրի մեջ շաքար ածել այն հաշվով, վոր մի ֆունտ ջրին ընկնի $1\frac{1}{2}$ ֆունտ շաքար. այնուհետև շարունակ խառնելով՝ յեփել 3-5 բուպե, քափը քաշել, կրակի վրայից վերցնել և ամեն մի փուլ կերին խառնել մի զգալ գլիցերին, կամ յերկու լիմոնի հյուլ և կամ մի քանի ֆունտ մեղր (ցանկալի յե վերջինը): Այս հյուլները չեն թողնում, վոր շաքարաջուրը պնգանա-շաքարանա:

Շաքարացած մեղրը և շաքարաջուրը վորպես ձմեռվա պաշար շատ փաստակար են: Այս հարցի շուրջը մանրամասն չենք խոսի, այսքանն ասենք միայն, վոր շաքարացած կեր ունեցող բնաանիքները ջրի պակասությունից խիստ նեղվում են և մեծ թվով մեղուներ են կոտորվում ձմեռը:

7. ԾԱՂԿԱՓՈՇԻ

Ծաղկափոշին հուլնալեռ ծառերի և խոտաբույսերի ծաղիկներից ե ստացվում: Սա չափազանց անհրաժեշտ ե թե մեղուների անդի և թե նոր սերնդի-վորդերի դարգացման համար: Առանց ծաղկափոշի ուտելու, մեղուները չեն կարող արտադրել այն խյուսը, վորով կերակրվում են վորդեր: Այս պատճառով, ձմեռվա պաշարը կարգավորելիս, անհրաժեշտ ե վորոշ քանակությամբ ծաղկափոշի թողնել բնում վաղ դարնան համար, յերբ դաշտերում դեռևս ծաղիկներ չկան: Առանց ծաղկափոշու, վորդի դարգացումն իսպառ կզաղարի: Իրենք՝ մեղուներն ել յերկար ժամանակ առանց ծաղկափոշու մնալով՝ հիվանդանում-վոջնջանում են:

8. Ա Կ Ն Ա Մ Ո Մ

Մեղուներն ախնամամբ վերցնում են գլխավորապես ծառերից, նաև մի քանի տեսակ բույսերից: Ակնամամբ

փորքան անհրաժեշտ է հին ձևի փեթակներում ծակ ու ծուկերը փակելու համար, նույնքան ավելորդ է անդուրեկան աշխատանք է կանոնավոր շինված արկղներում: Թեև մենք ժամանակին և նեղացնում ենք լայնացնում ենք արկանոցները, այնուամենայնիվ մեղուներն իրենց սովորության համաձայն աշնանն արկանոցները պաշտպանում են ականամոմի պատենշներով, փորոնք շինում են շատ սրամիտ կերպով և վարպետորեն: Այս ականամոմը դարձանք պիտի մաքրել, փորպեսզի մեղուների անց ու դարձը հեշտանա:

9. Ջ Ո Ւ Ր

Ջուրը մեղուների համար նույնքան անհրաժեշտ է, փորքան և բոլոր կենդանիների ու բույսերի համար: Յանկայի յե, փոր մեղվանոցին շատ մոտ առվակ կամ աղբյուր լինի: Այս անհրաժեշտ է մանավանդ դարձանք, յերբ մեղուները ցուրտ և փոփոխական յեղանակին ջուր են փորանում հեռուներում և մեծ քանակությամբ փոշնշանում են ցրտից ու քամիներից: Յեթե մեղվանոցում ջուր չկա, այդ դեպքում մեղուները ջուր պիտի ստանան մեղվանոցում դրված ջրամաններից, ջրի յերեսին տաշեղի կտորներ պիտի գցել, փորպեսզի մեղուները չխեղդվեն: Ամանների ջուրը հաճախ պետք է փոխել:

Վնասակար է, յեթե մեղվանոցի մոտակայքում կեդտոտ և հոտած ջրերով լճակներ ու ճահրճներ լինեն:

10. ՄԵՂՎԱՆՈՑԻ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՓԵԹԱԿՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ


Մեղվանոցի տեղի ընտրությունը շատ կարևոր համագամանք է: Մեղվանոցի տեղը պիտի լինի առանձնացած և այնպես պաշտպանված, փոր փոշ անց ու դարձ անողները և փոշ ել անասունները կարողանան մանել մեղվանոց մեղուների ազատ անց ու դարձին փոշին չպիտի խանգարի: Ծառերը շատ ցանկալի յեն մեն մեղվանոցում: Նրանք մեծ հարմարություն են տալիս ձաղերի իջնելու համար,

և ամառվա շոգերին պաշտպանում են փեթակներն արևի կիզիչ ճառագայթներից:

Մեղվանոցը տիրող քամիներից պիտի պաշտպանված լինի բարձր պարիսպով, խիտ անկած ծառերով կամ վոր և է ցանկապատով: Փեթակները դասավորելիս նույնպես պիտի նկատի ունենալ զլխավոր քամիների ուղղությունը և դասավորել այնպես, փոր արկանոցները քամու գիմաց չլինեն: Գերազանցի յե արկանոցները դասավորել դեպի արևելք, կամ հյուսիս-արևելք: Դեպի հարավ դարձնելը վատ է այն պատճառով, փոր որվա տաք ժամանակ արևն ընկնելով արկանոցների վրա, սառտիկ տաքացնում է նրանց և թուլացնում մեղուների աշխատանք:

Փեթակների շարքերի հեռավորությունը պիտի լինի առնվազն յերեք արշին, իսկ շարքում փեթակների հեռավորությունը միմիանցից առնվազն մեկ ու կես արշին: Յեթե տեղը հնարավորություն է տալիս այս տարածությունները մեծացնել՝ ավելի լավ:

11. ԲԹՈՑ ՅԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՎՈՐ ՓԵԹԱԿ



Դադան-Երևանի փեթակ

Հայաստանի մի բանի վայրերում գեոհս պահպանվում են հին ձևի բթոցները, փորոնք բուրբուկին չեն համապատասխանում ժամանակակից մեղվաբուծական գիտություն և արդյունք չեն տալիս: Յեվ այդ հասկանալի յե:

Մեր հին բթոցներում մենք փոշ մի հնարավորություն չունենք ստուգելու փոշ պաշտպան, փոշ մոր հասակը, փոշ բնատափրի ստուգել կամ հիմնով



լինելը: Ընդհակառակն, շարժական հացերով կամ շրջանակներով փեթակը մեզ այդ հնարավորութիւնը տալիս է և այդպիսի փեթակում մենք, ըստ կարիքի, դատաւորութեանք մեր աշխատանքները: Սրանցից տասնյակ տարիներ առաջ, յերբ հնարեցին շարժական հացերով փեթակը, մարդկանց համար շատ բան պարզվեց, վոր առաջ անհասկանալի յեր: Որինակ՝ առաջ կարծում էին, թե մայրը հրամայող թագավոր է և ամեն ինչ կատարվում է նրա հրամանով և կարգադրութեամբ: Բայց մի որ ես մեր թագավորին տեսան ձու ամէլիս և պարզվեց, վոր սա վոչ թագավոր է, վոչ եր, նույնիսկ, թագուհի, այլ պարզապէս մայր, վոր միշտ կարող է իր բաղմամբով աղջկերանց խնամքին և պաշտպանութեան: Իհարկե, շատ ու շատ բաներ ել պարզվեցին ու դեռ շատ բաներ ել պարզվում են:

Այն մեղվապաճները, վորոնք կամ մոլորաբար, կամ հարկադրաբար դեռևս կպած են քթոցին, պիտի աշխատեն վորքան հնարավոր է շուտ անցնել շրջանակավոր փեթակին:

Անփորձ մեղվապաճները շրջանակավոր փեթակին պիտի անցնեն կամ իրենց քթոցներից դուրս յեկած ձաղերը տեղավորելով նոր փեթակների մեջ և կամ, յեթե ուզում են միանգամից ազատվել քթոցներից, պիտի գիտեն փորձված մեղվապաճների ոգնութեան: Քթոցից արկղի մեջ փոխադրելու գործը բավականին հմտութեան է պահանջում, այդ պատճառով չի կարելի անփորձ մեղվապաճին խորհուրդ տալ կատարել այդ փոխադրութիւնը, վորովհետև անփորձ մեղվապաճները հոնքը շինելու տեղ, հաճախ աչքն ել հանում են:

Շրջանակավոր փեթակի ամենամեծ առավելութիւնն այն է, վոր մենք հնարավորութեան ունենք ամեն կերպ ոգնել այդպիսի փեթակում գանձող մեղուներին, վորպէսզի նրանց աշխատանքը հեշտանա և արագանա:

Մի շարք հաշիվներով պարզված է, վոր մեկ ֆունտ մոմ արտադրելու համար մեղուները գործ են անում,

այսինքն՝ ուսում էն 8—12 ֆունտ մեղր (վոմանց կարծիքով մինչև 20 ֆունտ). այս մոմից հացեր շինելու համար մեղուներն անագին ժամանակ են կորցնում, վոր կարող են գործադրել մեղր հավաքելու համար:

Գլանաձև մեքենայի (վորով արհեստական մոմաթերթ են պատրաստում) և շրջանակավոր փեթակի շնորհիվ, մենք մեղուներին ազատում ենք մեղրի այս խոշոր ծախսից ու ժամանակի կորստից և, իհարկե, սրանով մեծ ոգուտ ենք ստանում:

Ամեն մի մեղվապաճ չի կարող իհարկե մոմաթերթի արհեստանոց ունենալ. սա և՛ դժվար գործ է և՛ թանկ արժե, բայց մենք ունենք մի շարք հիմնարկութիւններ, վորտեղից մեղվապաճները կարող են մոմաթերթ ձեռք բերել:

12. ԻՆՉՊԵՍ ՓՈԽԱԴՐԵԼ ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՔՅՈՑԻՑ ՇՐՋԱՆԱԿԱՎՈՐ ՓԵԹԱԿԻ ՄԵՋ.

Այն մեղվապաճները, վորոնք ցանկանում են քթոցներից մեղուներին փոխադրել շրջանակավոր փեթակներին մեջ, ձմերանոցից դուրս գնելու ժամանակ, քթոցները մեղվանոցում պիտի դատաւորեն առանձին-առանձին այն տեղերում, վորտեղ զրգիլու յեն փոխադրված ընտանիքներով շրջանակավոր փեթակները: Այսպէս դատաւորված քթոցները պիտի շատ խնամքով պաշտպանված լինեն թե՛ դեռնի խոնավութեանից և թե՛ անձրեկից ու ցրտից:

Փոխադրութիւնը պիտի կատարել պաղտառ ծառերի ծաղկելուց առաջ, այսինքն այն ժամանակ, յերբ զրոյց մեղր դեռ չի մտել փեթակ, իսկ ներսի յեղածն ել վորոշ չափով արդեն ծախսված է. ուրիշ խոսքով, յերբ մեղրահացերի մեջ քիչ մեղր կա, կամ բոլորովին չկա. այսպիսի մեղրահացերի հետ գործ ունենալը հեշտ է:

Փոխադրութիւնն անպայման պէտք է կատարել տաք տեղակում: Ձեռքի տակ պատրաստ պիտի ունենալ ծխարար, մեղվապաճական դանակ, շրջանակի չափով մի տախ-

տակ, թեև և շրջանակի յերկարությամբ (միջին տարածությամբ) ու մասնաճափ լայնությամբ ձողեր, վոր կարելի չե ձողել սովորական արկղների տախտակներից: Այս ձողերը պիտի մանեն շրջանակի մեջ կողերի արանքն այնքան ամուր, վոր առանց կապելու յեկ վեր չընկնեն: Տախտակի վրա պիտի փռել վոր և ե շոր, վորպեսզի նրա վրա զրվող վորդով հացերը սառը տախտակին չկպչեն: շորի վրա դնել յերկու թել, կամ փալտաի յերկար, ամուր կտորներ և ապա այս բոլորի վրա պառկեցնել շրջանակը: Թելի յերկարությունը շրջանակի բարձրության յերկու չափ պիտի լինի: Այս բոլորը պատրաստելուց հետո քթոցի արկանոցով ուժեղ ծուխ պիտի տալ, արկանոցը փակել և ներս տանել: Տեղը պիտի դնել դադար, քթոց, վորպեսզի գուրսը յեղած մեղուները հավաքվեն մեջը: Դադարկ քթոց դնելու կարիք չի լինի, յեթե իրիկվանից արականոցը փակենք:

Ներս տանելուց հետո մի քանի անգամ, ընդմիջումներով, նորից ծուխ պետք ե տալ: Այնուհետև սուր գոհակով գլխի կողմի ուռերը կտրտել և հանել առաջ, տիպաբը: Յեթե քթոցն ամբողջ յերկարությամբ հավասար հաստություն ունի, նրան թեք պիտի դնել հետևի, կողմը բարձր և ծխելով ու քթոցի կողերին թեթե հարվածներ տալով մեղուներին պիտի քշել քթոցի հետևի մասի դատարկ տարածությունը, այս գործողությունը տևում ե 10—15 րոպե: Մեղուներից մաքրված մեղրահացերը պիտի կտրել և գուրս հանել: Այն չեչերը, վորոնց վրա վորդ չկա, առայժմ պիտի մի կողմ դնել: Հասնելով վորդով հացերին՝ զգուշությամբ պիտի կտրել և գուրս հանել: Քթոցների հացերը կլոր ձև ունեն, յեթե նրանց կողքերին դադարի բջիջներ կան, գանակով պետք ե կտրտել, իհարկե առանց վորդին փառելու, և աշխատել քառակուսի ձև տալ, վորպեսզի նրանք շրջանակների մեջ հարմար տեղավորվեն: Յերբ յերկու վորդով հաց արդեն հանված կլինեն, սրանց պիտի դնել տախտակի վրա զրված շրջանակի մեջ կող-

կողքի: Յեթե այս յերկուսը շրջանակի ամբողջ յերկարությունը չլցնեն, կտրելի յե ուրիշ չեչի կտորից կտրկատան գցել: Այնուհետև շրջանակի մեջ աղդեն դրված հացերի տակից պիտի հագցնել մեր պատրաստ ձողերից մեկը և նրան զգուշությամբ սեղմել: այնքան, վոր հա բավական ամուր հուպ տա հացերը շրջանակի վերի ձողին: հասկանալի յե, վոր այնքան չպետք ե հուպ տա, վոր հացերը ծալվեն և վորդը ջարդվի: Այնուհետև հացերի տակ գաղնավող յերկու թելերի ծայրերն անցկացնել մեր նոր դրած ձողի տակով և կապել շրջանակի վերին ձողի վրա այնքան ամուր, վոր հացերը չիջնեն և չհեռանան շրջանակի վերին ձողից: Այս գործողությունը վերջացնելուց հետո, շրջանակն իր տակի տախտակի հետ միասին բարձրացնել, և յերբ շրջանակն ուղղահայաց դիրք կընդունի, տախտակը հետ դնել տեղը, իսկ շրջանակը՝ փեթակի մեջ: Քթոցի դատարկ մասում հավաքված մեղուներին զգալով կամ շերեփով զգուշությամբ լեցնել փեթակի մեջ, վորպեսզի նրանք վորդերին ծածկեն Փեթակը պիտի ծածկել վորեւ տաք շորով: Նույն ձևով պետք ե վարվել վորդով մնացած մյուս հացերի հետ: Վորդով հացերի հետ գործը վերջացնելուց հետո պիտի կապել և դնել թե մեղրով հացերը և թե մաքուր և սպիտակ դատարկ չեչերը: Յեթե կան շատ սև ու անպետք չեչեր, այդպիսիներն իհարկե չպիտի դնել: Վորդով շրջանակները պիտի դրված լինեն բնի մեջ տեղը, իսկ յերկու կողքից՝ մյուս շրջանակները: Պիտի նկատի ունենալ մի կարևոր հանգամանք, մեղրահացերը շրջանակների մեջ պիտի կապել այն դիրքով, ինչ դիրքով նրանք յեղել են քթոցում, այսինքն՝ քթոցի վերին պատերին կպած կողերը պիտի կպչեն շրջանակի վերին ձողին: Յերբ քթոցն արդեն դատարկվել ե, նրա միջի մեղուներին պիտի թափ տալ արկղի մեջ:

Այս բոլոր գործողությունների ժամանակ շատ զգուշ և ուշադիր պիտի լինել, վորպեսզի մայրը չսպանվի կամ չկորչի: Յերբեմն պատահում, վոր մայրը սպանվում ե դա-

նակի անգղույշ շարժումից կամ մնում է քթոցի վոր և է խոռոչում:

Ամեն ինչ փեթակում տեղավորելուց հետո միտում մանակ պիտի սպասել, մինչև փեթակի հատակին թափված մեղուները բարձրանան շրջանակների վրա, ապա պիտի հանել հատակը, մարբել թափված աղբը, լվանալ ծորած մեղրը, չորացնել և նորից տեղը դնել:

Այս բոլորը կատարելուց հետո յերկու հոգով պիտի վերցնեն փեթակը, տանեն գնեն իր տեղն այնպես, վոր փեթակի արկանոցը լինի ճիշտ նույն տեղում, վորտեղ քթոցի արկանոցն էր: Դատարկ քթոցի մեջ հավաքված մեղուներին պիտի թափ տալ փեթակի առաջ փռած ստվանի վրա: Պետք է գուրս անել նաև սենյակում ապակիների վրա հավաքված մեղուներին:

Քթոցներից տեղավորված ընտանիքները սովորաբար շատ թույլ են լինում, նրանք հազիվ յերկուսից-չորս շրջանակ են բռնում. բնական է, վոր այսպիսի փոքր ընտանիքը չի կարող պահանջվող աաքուլթյունը պահպանել մեծ ծավալ ունեցող փեթակում, ուստի անհրաժեշտ է տիփարով (միջնատախտակ) բռնը փոքրացնել և վերևից ել տաք ծածկել: Արկանոցը պիտի փոքրացնել այնքան, վոր մի յերկու մեղու միայն կարողանան անցնել: Առաջին որերին նոր փոխադրված փեթակները կարող են հարձակման յենթարկվել, ուստի պիտի շատ զգույշ լինել: Յեթե քթոցն իր աժրող յերկարությամբ հավասար հաստություն չունի, այլ նրա հետին մասը գլխի կողմից զգալի չափով լայն է, այս դեպքում փոխադրության յեղանակը մի քիչ պիտի փոխել. առաջին տիփարը հանելուց հետո, քթոցի գլուխը պիտի անց կացնել վոր և է ուրիշ քթոցի կամ ուրից գործած ձագկալի մեջ, շորով փաթաթել յերկու քթոցի միացման տեղը և մեղուներին ծխով ու քթոցի կողերին հարվածելով՝ բշել դեպի նոր անցկացրած քթոցը: Մնացածն այնպես, ինչպես նկարագրված է:


Մի քանի որից հետո պետք է նայել փեթակը, յեթե

շրջանակների մեջ կապած հացերը յերեք կողմից մեղուներն արդեն լավ ամրացրել են շրջանակի վերի և կողքի ձողերին, թեկերը պիտի արձակել և հանել, զգուշությամբ պոկել և հանել նաև հացերի տակ դրած ձողը:

13. ՄԵՂՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Փորքս կամ ծխարար.— Սա ամենաանհրաժեշտ գործիքն է ամեն մի մեղվապահի համար. առանց այս գործիքի հնարավոր չի կանոնավոր աշխատանք կատարել մեղվանոցում:

Ամեն անգամ փեթակը բանալուց առաջ մի բանի քուլտ ծուխ պիտի փչել արականոցով և ապա բանալ: Աշխատանքի ընթացքում, յերբ մեղուները բարկանալու նշաններ են ցույց տալիս, շրջանակների վրայից նրանց պիտի ներս բշել ծխով: Ամենալավ նյութը ծխի համար աթարն է, կամ անտառոտ տեղերում՝ փռած փայտը:



Ծխարար կամ փուխ



Գ ո ղ

Բող.— Սկսնակ մեղվապահներին քողն անհրաժեշտ է, վորպեսզի պաշտպանվեն մեղուների խայթոցից և սառնասիրտ աշխատեն: Բայց, յերբ մեղվապահը փորձվում է, քողն ավելորդ է դառնում: Պետք է սովորել աշխատել առանց քողի:

Խողանալ (չոտք).— Գործ է ածվում, յերբ կարիք է լինում շրջանակն ազատել մեղուներից:



Խոզանակ Խոզանակի գործածութիւնը մեզուներին ավելու համար անհրաժեշտ է մանաւանդ այն դեպքում, յերբ գործ ունենալ վորդով հացերի հետ: Այսպիսի հացերից մեզուներին վոչ մի դեպքում թափ տալ չի կարելի: Խոզանակը պետի գործածել թրջած, ալլապես մեզուները խճճվում են մազերի մեջ և սաստիկ գրգռվում:

Դոնակ.—Գործ է ածվում բազմաթիւ դեպքերում, և զլխաւորապես մեզը քամելու ժամանակ՝ մեզրի սերկը (կնիքները) բաց անելիս:



Աբբոսի դանակ Սերեկը կարող դանակը լավ սրած, տաք և թաց պիտի լինի, զրա համար մեզը քամողը կրակի վրա դրած մի ամանով տաք ջուր պիտի ունենա. դանակն այդ ջրի մեջ պիտի ընկղմել մինչև կոթը: Ավելի լավ է ունենալ յերկու դանակ:

Դանակը պիտի տաք և թաց լինի, վորպեսզի աշխատանքը հեշտ և արագ կատարվի, իսկ բջիջները չփչանան: Սառը դանակով աշխատելիս գործը դժվարանում է, իսկ բջիջների բերանները ջարդվում են:



Ք ե ռ ի չ

Քերիչ.—Քերիչը չափազանց անհրաժեշտ գործիք է. սրանով քերում են հատակը, փեթակի պատերին, շրջանակների կողերին և վերեր կպած մոմը: Փեթակը նաչելու ժամանակ իրարից հեռացնում են շրջանակները և այլն:

Վանդակ.—Վանդակը մետաղաթելից գործած փոքրիկ արկղ է, վորով անմայր ընտանիքներին մայր են տալիս: Ներքից բացվող փայտե դռնակի վրա փորվածք ունի, վորտեղ մոր համար կերակուր է դրվում— մի փոքրիկ կտոր չեշով մեզը:




Վանդակ



Մոմալ չալնիկ

Մոմալ չալնիկ.—Մոմալ չալնիկն անհրաժեշտ է մոմաթերթը շրջանակից կպցնելու համար: Նա բազկացած և յերկու իրար մեջ հազցրած կաթսաներից. ներսի կաթսայի մեջ մոմն է, զրսինի՝ մեջ ջուրը:




Շրջանակ մոմելու տախտակ

տակ. այս վերջինը պիտի մանի շրջանակի մեջ: Հաստութիւնը շրջանակի խորութիւն կիսից մի քիչ պակաս պիտի լինի, այնպես վոր մոմաթերթը կպած լինի շրջանակի վերին ձողի ուղիղ մեջտեղին:

Նույնպիսի համապատասխան չափի տախտակ պիտի ունենալ նաև վերնահարկի շրջանակների համար:

Շրջանակ յերկաթալարելը յեւ չեւ կպցնելը.—Ստորեկ գետեղած յերկու նկարը (1-ին և 2-րդ ձև) ցույց են տալիս շրջանակ յերկաթալարելու յերկու ձև: Ընտրութիւնը մեզվապահներին թողնելով, պիտի տեսնաք միայն, վոր յերկրորդ ձևը գերազանց յե: Յերկրորդ ձևով յերկաթալարած

շրջանակ մոմաթերթը բաժանվում է 5 նեղ մասերի, փորոնք տաքությունից չեն ձգվում և բլիշները չեն ձևափոխում: Այս հանգամանքը շատ կարևոր է մանավանդ այն դեպքում, յերբ ձագերին ենք մոմաթերթ տալիս: Շատ հաճախ մոմաթերթը կարվում է կամ ձգվում և բոռաբլիշ է գցում: Բնի շրջանակները յերկաթալարելով անգամայն անհրաժեշտ է նաև այն պատճառով, փորպեսպի մեղրահացերը



Յերկաթալարած օջաճակ
1-ին ձև

բամելիս չկտրալեն: Շրջանակների յերկաթալարելն ավելի ևս կարևոր է դառնում, յերբ մեղվանոցը մի տեղից մի այլ տեղ են տեղափոխում: Յերկրորդ ձևը նաև այն առավելությունն ունի, փոր ոգրաֆների գործածությունը ավելորդ է դառնում: Շրջանակի կողքի բարակ ձողերը հեշտությամբ ծակում են բզով:




Յերկաթալարած օջաճակ
2-րդ ձև

Շրջանակը յերկաթալարում են հետևյալ ձևով:

Պաշույի գործիքով շրջանակի համապատասխան տեղերում խփում են յերկծայրը մեխեր (ազրաֆներ), ապա անցկացնում շրջանակների համար գոյություն ունեցող կրայեկած հատուկ յերկաթալարը և լավ ձգում լարում արքանով (գաղով): Պաշույի գործիք չունենալու դեպքում կարելի յէ շրջանակի կողքի ձողերը բզով

ծակել և մեղաթալարն անցկացնել:

Այնուհետև վերցնում են մոմաթերթը, քանոնի և սուր դանակի ոգնությամբ ուղղում նրա յերեք կողմերը, փորոնք կղչելու յեն շրջանակի վերին և կողքի կողքերին, չեչը գնում են տախտակի վրա, սրա վրա հագցնում յերկաթալարած շրջանակը և վուսրելի գործիքով սեղմում յերկաթալարը մոմաթերթի մեջ:



Պաշույի գործիք յեվ
մեխեր

Այս գործիքը յերկաթալարի վրայով այնպես պիտի տանել, փոր նա ընկնի անիվի շրջանակով անցնող ակոսի մեջ: Միանգամայն անհրաժեշտ է, փոր այս գործիք բանեցնելիս մի քիչ տաք լինի, այնքան, փոր չեչը չբբբբի, այլ այնքան փափկացնի, փոր յերկաթալարը լավ թաղվի մոմի մեջ. Վուսրելի գործիքը շատ տաք չպետք է գոր-



Վուսրելի գործիք

ծածել, փորովհետև մոմը կհալվի, կծակծկոտվի և այլևս պետք չի գալ:

Այս գործիքն ել չունենալու դեպքում կարելի յէ յերկաթալարի յերկարությամբ հալած մոմ կաթեցնել և այդ ձևով աժրացնել, սակայն այսպես վարվել միշտ հնարավոր չէ, այլ անպայման պիտի գործիք ձեռք բերել: Այս գործն ել վերջացնելուց հետո ձախ ձեռքով պիտի

վերջնել տախտակը շրջանակի հետ միասին, թեք բռնել և մոմահալ չայնիկից հալած մոմի բարակ հոսանք թողնել մոմաթերթի և շրջանակի ձողերի միացման դժեքով:

Մոմաթերթի և շրջանակի ներքին ձողի մեջ մի մատնաչափ ազատ տարածություն պիտի թողնել:

14. ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆ ՊԵՏՔ, ՎՈՐ ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՅԵՎ ԱՐԱԳ ԶԱՐԳԱՆԱ

Վորպեսզի մայրը կարողանա լիովին կատարել յուր դործը, այսինքն շատ ձու ածել, անհրաժեշտ են մի շարք պայմաններ—տաք բուն, առատ պաշար և հարկավոր թվով բանվոր մեղուներ:

Տեսնենք, թե այս պայմաններից ամեն մեկը ինչ նշանակություն ունի մեղվի ընտանիքի զարգացման գործում:

Ամեն մի գյուղացի շատ լավ գիտե, վոր հավի ձվից ձուռ ստանալու համար պետք է այդ ձուն 21 սր լինի վորոշ տաքության մեջ, վորպեսզի ձվի սաղմը զարգանա և ձուռ դառնա: Այդ է պատճառը, վոր ձուն գնում ենք թուխտի տակ:

Յեթե փեթակում մենք անհրաժեշտ տաքություն չպահպանենք, մայր մեղուն կսկսի շատ քիչ ձու ածել և նույնիսկ կարող է բոլորովին դադարել ածելուց: Սրա հետևանքը կլինի այն, վոր ընտանիքի զարգացումը կանգ կառնի և տերը վոչ մի արդյունք չի ստանալ:

Վորդի զարգացման համար յերկրորդ խոշոր պայմանը կերի պաշարն է: Տարվա բոլոր յեղանակներին մեղվի ընտանիքը պետք է ապահովված լինի կերի պաշարով: Մայրը, նայելով, թե վորքան առատ կերակուր է ստանում մեղուներից, բոտ այնտեղ ավելի կամ պակաս թվով ձու յե ածում: Առատ կերակրվելու դեպքում մայրն ավելի մեծ թվով է ձու ածում և ընդհակառակն: Մեղուներն այս խնդրում հարմարվում են փեթակում յեղած մեղրի պաշարին—շատից՝ շատ են տալիս մորը, քչից՝ քիչ:

Յերրորդ կարևոր պայմանն այն է, վոր փեթակը բավարար թվով մեղուներ պիտի ունենա, վոր թուխտըստելով վորդի վրա նրան տաք պահեն, կերակրեն և առհասարակ խնամեն: Մայրն իր ածած ձվերի թիվը հարմարեցնում է մեղուների թվին: Յեթե փեթակում մի բուն մեղու կա, մայրն այնքան ձու կածի, վորքան այդ մի բունը մեղուն կարող է խնամել:

Այն յերեք հիմնական պայման, վորոնց միացումից է կախված փեթակի յուրաժամանակ զորացումը: Այս պայմաններից մեկն ու մեկը չլինելու դեպքում, ընտանիքի զարգացումը շատ կդանդաղի:

Զորրորդ անհրաժեշտ պայմանի մասին արդեն խոսել ենք—զա մոր ջանքերով:

Փեթակները պահեցեք տաք, մանավանդ զարնան ամիսներին, կուշտ, մեղրով առատ ու ջանի մորով և ձեր յեկամուան ապահովված է:

Գարնանը բունը վորքացրեք ափաբով և թողեք այնքան շրջանակ, վորքան կարող են ծածկել մեղուները:

Շրջանակները վերևից պետք է ծածկել կոպիտ քաթանով և սրա վրայից դնել քեշա, բրդի կամ գարմանի բարձ:

15. ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ԴՈՒՐՍ ԴՆԵԼԸ

Յերը ձյունը դաշտերում հալվում է և յեղանակը բավականին տաքանում, փեթակները պետք է դուրս դնել: Մեր յերկրում մեղուներին դուրս ենք դնում մարտ կամ ապրիլ ամիսներին, նայած յեղանակին և տեղի բարձրությունը:

Նախորդ պետք է կարգի բերել մեղվանոցի տեղը, փեթակների վառների տակ զրվոյ ցցերը, բարբրը կամ աղյուսները պիտի շարել իրենց տեղերում: Փեթակները վորքան իրարից հեռու լինեն, այնքան լավ, համենայն դեպս հեռավորությունն այնքան պիտի լինի, վոր մեղվապահը կարողանալ ազատ շարժվել:

Փեթակները կարելի չե՛ր գուրա գնել և՛ առավոտյան և՛ յերեկոյան. առաջին դեպքում պիտի գուրա գնել վաղ առավոտյան: Յերեկոյան գուրա պիտի գնել ա՛յն դեպքում միայն, յեթե հաստատ նշաններ կան, վոր մյուս որը լավ յեղանակ կլինի. գիշերվա ընթացքում մեղուները լավ հանգստանում են և մյուս առավոտ հանգիստ և սովորական կարգով կատարում են առաջին թռիչքը: Դուրս գնելու ժամանակ արկանոցները փակ պիտի լինեն, իսկ քիչ հետո պիտի բաց անել:

Առաջին օրն մեղվապահն ուշադրութեամբ պիտի հետևի՝ բոլոր ընտանիքները թռիչք գործում են. թե՛ վոր: Յեթե նկատվի, վոր կան թռիչք չգործող ընտանիքներ, իսկույն պիտի ստուգել: Կարող ե՛ս պատահել, վոր փեթակի արկանոցը բռնված լինի ստակած մեղուների դիակներով. այս դեպքում արկանոցը պիտի բռնալ: Կարող ե՛ս պատահել, վոր ընտանիքը քաղցից ուժից ընկած և մահվան դուռը հասած լինի: Այսպիսի դեպքերը պատահում են անուշապիր և անբարեխիղճ մեղվապահների մոտ: Այսպիսի դեպքում փեթակն անմիջապես պիտի տանել տաք սենյակ, շաքարաջուր յեփել և գոլ-գոլ փշել մեղուների վրա (ամեն մի շրջանակն առանձին) և հատակին, յեթե մեղուներն արգեն թափված են: Յեթե արգեն ուշ չե՛ս, միշտ հաջողվում ե՛ս հետ բերել մեղուներին: Այս փեթակը մի օր պիտի թողնել սենյակում, ապահովել պաշարով և ապա դուրս գնել: Պաշարը կարելի չե՛ս տալ շրջանակավոր մեղրով, իսկ այգալիսի մեղր չլինելու դեպքում — ծոր մեղր կամ շաքարաջուր:

16. ՀԱՏԱԿՆԵՐԸ ՄԱՔՐԵԼԸ

Յերկրորդ օրը պիտի հատակները մաքրել: Մի քիչ ծուխ փշել արկանոցով, յերկու հոգով վերցնել փեթակի բունը մի կողմը գնել. հատակին ընկած-ստակած մեղուները թափել մի արկղի մեջ, բերել փալատով մաքուր սրբել և բունը գնել տեղը: Յեթե հիվանդ փեթակներ լինեն,

այգալիսները հատակները պետք ե՛ւ վերջում մաքրել: Արկղում հավաքված ստակած մեղուներն ու հատուկի աղբը ալրել, կամ թաղել հողի մեջ: Այս գործողութեանը վերջացնելուց հետո գործիքներն ու ձեռքերը պետք ե՛ս փափա՛հանել սուլեմայի լուծույթով, (խառնուրդ 1:1000-ի) իսկ փայտն ալրել:

17. ԹՈՒՑԻԿ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, կամ հետևյալ օրը լավ կլինի թուուցիկ կերպով ստուգել բոլոր ընտանիքների պաշարը, կամ գոնե կապած լինելիքներ: Պետք ե՛ս բռնալ փեթակը հետևի կողմից, հետ քաշել շրջանակները և ստուգել՝ մեղր կա՞, թե՛ վո՛չ: Մեղրը սովորաբար կենտրոնացած ե՛ւ լինում շրջանակների հետևի մասում և մի քանիսը նայելով մոտավորապես պարզվում ե՛ւ ընտանիքի զբոսթյունը:

18. ՀԻՄՆԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական գննութեանը պիտի կատարել մեղուներին դուրս գնելու հետագա օրերին, բնաբերով դրա համար տաք և խաղաղ օր: Այս գննութեանը փտանգավոր ե՛ս ցերեկը կատարել, վորովհետև անպայման մեղուների հարձակում կլինի: Լավ ե՛ւ գննութեանը կատարել յերեկոյան դեմ, վորպեսզի, յեթե հարձակում սկսվի ել, վրա հասնող մութը խանգարի: Այս գննութեանը վերջնականապես պիտի պարզի, թե՛ վնդբան պաշար կա փեթակում, վնդբան կարիք կա ավելացնելու, մայր, վորդ կա՞ արդյոք: Ամբողջովին բորբոսնած հացերը պիտի հեռացնել, իսկ յեթե բորբոսնած են հացերի ներքի մասերը՝ կտրուել դանակով: Բնի կենտրոնից հետ քաշել, հեռացնել շատ հնացած, սևացած, անկանոն և բուռն շիջներով հացերը. սրանք բնում կման մինչև մեղրից ազատվելը, իսկ յեթե դադարի են, անմիջապես հանել: Վորդ ունեցող յերկու հացի արանքում յերբեք ուրիշ շրջանակ չգնել: Զննութեանը հնարավորին

չափ պիտի կատարել արագ, վորպեսզի փեթակը չսառչի
և վորդը չմըսի:

19. ՄԵՂՎԱՊԱՆԻ ՈՐԱԳԻՐԸ

Վորովհետեւ հիշողության մեջ դժվար է պահել այն
ամենը, ինչ նկատուած ենք փեթակում և ինչ անելու յենք,
այդ պատճառով անհրաժեշտ է պահել մի ծոցատետր, վո-
րի մեջ գննված փեթակ №-ի տակ (փեթակները պիտի
համարագրված լինեն) նշանակուած ենք այն բոլորը, ինչ վոր
կա փեթակում և այն ամենը, ինչ վոր անելու յենք:

20 ԱՆԿԱՆՈՆ ՅԵՎ ՇՆՍՏՍԾ ԶԵԶԵՐԻ ՓՈԽԵԼԸ

Անկանոն և հնացած չեչերի փոխելը պիտի սկսել զար-
նանից և տատիճանաբար մինչև աշուն կատարել: Անկա-
նոն են համարվում այն չեչերը, վորոնք սլիքանման ծալ-
քեր ունեն և, ուրեմն, ունեն զանազան խորութեան բլիշ-
ներ: Չափից ավելի խորութեան ունեցող բլիշների մեջ
մայրը ձու չի դնում. այսպիսի չեչերը բնի համար ան-
պետք են: Անկանոն են համարվում նաև այն չեչերը, վո-
րոնք տաքութունից և այլ պատճառներից ձգվել են և
յերկարացած բլիշներ ունեն. այսպիսի չեչերի մեջ մայրը
կամ ձու չի ածում, կամ ածում է բոռի ձու: Յերկու տե-
սակի չեչերն ել պիտի կտրել և գործածել վերնահարկի
շրջանակների համար: Անպետք պիտի համարել մեղունե-
րի փորլուծութեանից կեղատուված և հնացած, մզլած ծաղ-
կափողով լիք չեչերը. սրանց պիտի ջարդել: Չեչը հնա-
ցած պիտի համարել, յերբ նա սեպցել է և լույսի առաջ
բռնելիս՝ լույսը չի թափանցում: Նկատված է, վոր փառխա
հիվանդութեանը ավելի յերևում է այսպիսի չեչերում.
ուրեմն, բնի չեչերը թարմ և սպիտակ պահելով՝ մենք վո-
րոշ չափով փառխառով վարակելու վտանգը պակասեցնում
ենք: Բացի դրանից, շատ սեպցած չեչերի բլիշները փոք-
րանում են և կարող են մեղունների մանրանալու և այլա-
սերվելու պատճառ դառնալ:

Ինչպես ասացինք, այդ չեչերը պիտի փոխել աստի-
ճանաբար: Գարնան գննութեան ժամանակ, յեթե այսպիսի
զաղարկ չեչեր պատահեն, պետք է անմիջապես հեռաց-
նել. յեթե մեղրով են, պիտի գնել վերջին տեղը և դա-
դարկվելուց հետո վերցնել. յեթե վորդով են, պիտի դնել
վերջին վորդով շրջանակի մոտ և հեռացնել՝ վորդը դուրս
դալուց հետո: Նույնպիսի ընտրութեան պիտի կատարվի
նաև աշնանը մեղրը քամելուց հետո. անպետք համարվող
չեչերը պիտի ջարդել և միուս տարվա համար չպահել:

21. ՊԱՇԱՐԻ ԼՐԱՑՈՒՄԸ

Յեթե մեր որսորդը ցույց է տալիս, վոր այսինչ №
փեթակը կերի կարիք ունի, մենք այդ կարիքն անմիջա-
պես բավարարում ենք: Ամենից լավ է տալ շրջանակով
սերեկած մեղր, վոր հոգատար մեղվապահը վորոշ քանա-
կութեամբ պահած պիտի լինի աշնանից: Իսկ յեթե մեղր
չկա, պիտի տալ թանձր շաքարաջուր, վորի պատրաստե-
լու ձևի մասին արդեն ասել ենք ($1\frac{1}{2}$ ֆ. շաքար՝ մի ֆունտ
ջրի հետ յեփած):

Ինչպիսի կերակուր ել լինի, անպայման յերեկոյան
պիտի տալ, իսկ ցերեկը՝ վոչ մի դեպքում, թե չե հար-
ձակում առաջ կրերենք:

Կերակուր տալու համա կան հատուկ ամաններ, բայց
վորովհետեւ մեր մեղվապահներից շատերը չունեն այդ ա-
մաններից, ուստի պիտի տան հետեյալ ձևով, վոր իսկի
յեկ վատ չէ:

Կերակրվող փեթակից պիտի հանել մի դադարկ չե-
չով շրջանակ, ներս տանել սենյակ և վորեւեւ չայնիկով
կերը լեցնել չեչի մեջ, փերից սկսելով: Իհարկե շրջանա-
կի տակը վորեւեւ աման պիտի դրած լինի, վորպեսզի հո-
տով հեղուկը հատակին չթափվի: Հացը յերկու կողմից լեց-
նելուց հետո, պիտի գնել փեթակի մեջ:

Հարձակման վտանգից ազատ լինելու համար լավ է կերակուր ստացող փեթակի արկանոցը հետևյալ ուր փակած պահել:

22. ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՄԻՋԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Մեղունները բնական դրությամբ չեն պատրաստելիս, որինակ քթոցներում, հացերի արանքում միշտ միևնույն տարածությունն են թողնում: Մեր մեղվանոցներից շատ-շատերում այս կանոնը չի պահվում, և շրջանակները կամ իրարից շատ մոտ են դասավորվում, կամ շատ հեռու: Շրջանակների կանոնավոր հեռավորությունը կարևոր հանգամանք է. այդ բնական տարածությունը պիտի պահպանել կամ աչքի վարժությամբ, կամ, ավելի լավ է, ցուցամատի հաստությունը, վոր մոտավորապես համապատասխանում է հացերի միջի բնական տարածության: Իհարկե ցուցամատը վորպես չափ չի կարող ծառայել, այս խորհուրդը յես տալիս եմ անփորձ մեղվապահներին. վորոնք վոչ մի գաղափար չունեն շրջանակների միջի տարածության մասին և չափազանց անկանոն են դասավորում նրանց: Սա չարիքներից փոքրագյունն է: Ով աչքի կամ ձեռքի վարժությամբ շրջանակների կանոնավոր դասավորություն չի կարողանում պահպանել, նա պիտի ոգավի գոյություն ունեցող բաժանարարներով: Բաժանարարները վորոշ անհարմարություններ առնեն, սակայն անփորձ մեղվապահների համար նրանք անհրաժեշտ են:

23. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գարնանը և աշնանը, յերբ դաշտերում բերք չկա, մեղունները խիստ տրամադիր են լինում թալանի: Սա չափազանց վտանգավոր բան է: Յեթե մեղվապահի անուշազորություն կամ անգիտություն պատճառով հարձակում է սկսվում մեղվանոցում և ժամանակին այդ հարձակման առաջը չի առնվում, գործը շատ ցավալի վախճան է ու-

նենում: Վոչ միայն առանձին փեթակներ, այլև ամբողջ մեղվանոցներ կարող են վռնչանալ և այգուխի զեպքեր յեղել են: Ահա թե ինչն է շատ ուշադիր և զգուշ պիտի լինել:

Յեթե փեթակը բավականաչափ ուժեղ չէ պաշտպանվելու համար, ներս մտած գոգերն առաջին հերթին սպանում են մորը և ապա մոր կորստյան պատճառով հուսահատություն մեջ ընկած մեղուններին ու թալանում են մեղրը մինչև վերջին կաթիլը:

Հարձակման պատճառները շատ են: Հարձակում կարող է լինել, յերբ փեթակը նայելիս յերկար ժամանակ բաց է լինում, յերբ անզգուշ և անժամանակ կերակուր ենք տալիս, յերբ մեղվանոցում անզգուշությամբ մեղր ենք կաթեցնում, յերբ հանած ավելորդ հացերն իսկույն ներս չենք տանում, յերբ մեր մեղվանոցը լավ չի պաշտպանված և մեղունները դռան կամ պատուհանի անցքերով ներ են մտնում և համեստ մեղրոտ հացերին, յերբ մեղվանոցում անմայր փեթակներ կան: Այսպիսի փեթակները կամ վատ են պաշտպանվում, կամ իսկի չեն պաշտպանվում և արագությունը զոհ են գնում թալանչիներին:

Հարձակման-զոգություն նշանները հետևյալներն են. զոգություն յենթակա փեթակի արկանոցի կամ նրա վոր է ծակի մոտերքը թռչում են հառհառ գոգ մեղուններ և աշխատում են ներս մտնել, իսկ փեթակի ներսում յեղած մեղուններն աշխատում են նրանց ներս չը թողնել. այնուհետև պարզ կարելի յե նկատել, թե ինչպես փեթակի մեղունները բռնած դուրս են քաշում գոգ մեղուններին: Բացի զրանից ուշ յերեկոյան, յերբ մնացած փեթակներն արդեն հանգստացել են և թռիչքը դադարել է, հարձակման յեթարկվող փեթակը չի հանգստանում:

Ինչից ել սկսված լինի զոգությունը, իսկույն պիտի վերացնել պատճառը և միջոցներ ձեռք առնել՝ հարձակման առաջն առնելու:

Ամենից առաջ բոլոր փեթակների արկանոցները պիտի այնքան փոքրացնել, վոր մի մեղու միայն կարողանա անցնել:

Յեթե հարձակումը նոր է սկսվել, միանգամայն բավական է արկանոցի մոտ հավաքված մեղուների վրա ջուր շաղ տալ: Նույնը պիտի կրկնել ընդմիջումներով: Մի արկանոցից հալածված գողերը փորձ են անում հարևան փեթակների վրա հարձակվելու. այդպիսիներին պիտի հետեւել և ջրով հալածել (ջուրը շաղ տալ ավելով կամ մեղվապահական խողանակով): Կամ է ոգնում նավթի, վորի հոտից մեղուները սարսափելի փախչում են: Փալաս թրջել նավթի մեջ և քսել արկանոցի շուրջն՝ առաջին պատին, արկանոցի առաջին տախտակին: Նավթով թրջված մեղուն անմեջապես սատկում է:

Յեթե հսկողության պակասության պատճառով հարձակումն ուժեղ կերպարանք է ստացել և այլ կս վերոհիշյալ միջոցները չեն ոգնում, հարձակման յենթարկվող փեթակը, կամ փեթակները մինչև իրիկուն մի կերպ պահպանելուց հետո, արկանոցները պիտի փակել, հեռացնել մի հով և մութ տեղ. սրանց տեղը դնել դադարկ փեթակներ նավթոտած արկանոցներով:

Մի յերկու որից հետո, յերբ մեղվանոցը հանգստանա, փեթակները պիտի դուրս դնել:

Իհարկե, ուշադիր մեղվապահը գործն այս դրության չի հասցնի:

Ներս դրած փեթակներին ջուր պետք է տալ. կաբելի յե տալ կամ շրջանակով կամ ուղղակի ծածկոցի մի ծայրը բարձրացնելով և մի քիչ ջուր լցնել փեթակի միջ հատակի վրա:

24. ԱՆՄԱՅՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԱՅՐ ՏԱԼԸ

Չմեովա ընթացքում մի քանի ընտանիքներ գանազան պատճառներով զրկվում են մորից: Պատահում է, վոր հասակն առած մայրը մեռնում է բնական մահով.

պատահում է, վոր այն շրջանակի մեղրը, վորի վրա ձմեռում է մայրը, վերջանում է, և նա, չկարողանալով անցնել մյուս շրջանակները, սովորման է լինում իր հետ գանազան մեղուների հետ միասին: Ինչ էլ լինի պատճառը, փաստն այն է, վոր փեթակների 5—10 տոկոսը ձմեռվա ընթացքում զրկվում են մայրերից: Այսպիսի դեպքերի համար է, վոր մեղվապահները նախորդ ամրանից պահեստի մայրեր պիտի ունենան փոքրիկ փեթակներում, վորոնք կոչվում են նուկլիուս: Իր տեղում այս մասին խոսք կլինի: Պահեստի մայրեր ունենալու դեպքում պիտի մայրեր տալ այդպիսի ընտանիքներին առանց ուշացնելու. իսկ յեթե ուշանա՝ առաջ կզան բոռածու մեղուներ. այսպիսի փեթակին մայր տալը շատ դժվար է, վորովհետև բոռածու մեղուները սովորաբար մայր չեն ընդունում:

Ուրեմն, յեթե նուկլեուսներում պահեստի մայրեր կան, պիտի բռնել նրանց (վոչ փորից, այլ անպատճառ թևերից կամ կրծքից) և դնել վանդակի մեջ (տես 25-րդ յեր.) վանդակը պիտի տեղավորել անմայր փեթակի յերկու մեղրոտ հացերի արանքում և զգուշությամբ սեղմել այնքան, վոր վանդակը մի քիչ թաղվի մեղրի մեջ: Այսպես է արվում այն նպատակով, վոր մայրը բանտարկության ժամանակամիջոցում կարողանա կերակրվել, մինչև վոր մեղուները կհաշտվեն նրա հետ և կսկսեն իրենք կերակրել նրան:

Յերրորդ որվա յերեկոյան դեմ արկանոցից պիտի ծուխ տալ, բանալ փեթակը, բաց անել վանդակի դուռը, բաց թողնել մորը ու ծածկել փեթակը: Այս գործողությունը պիտի արագ կատարել: Յեթե այդ ժամանակ գող մեղուներին հաջողվի մտնել փեթակ, մեղուների մեջ խառնաշփոթություն կտիրի, կասկած կառաջանա դեպի մայրը, վորը կարող է զոհ գնալ—նրան կսպանեն: Այսպիսի դեպքեր, թեև վոչ հաճախ, բայց պատահում են:

Կարելի յե նաև վանդակի դռնակը բանալ և մոմաթերթի կտորով փակել ու նորից դնել փեթակի մեջ. մե-

դուներն իրենք կկրծեն մօմը և կաղտաեն վանդակից:

Անհրաժեշտ և շեշտել մի հանգամանք ևս. վանդակները գործածությունից առաջ պետք է մի լավ մաքրել և գցել յեռման ջրի մեջ, վարպետի նա փոշ մի կողմնակի հոտ չունենա: Շատ անգամ մօրը չընդունելու պատճառը լինում է կեղտոտ և անդուրեկան հոտ ունեցող վանդակը. այս հոտը հաղորդվում է մօրը և մեղուները նրան չեն ընդունում:

Բոռածու մայրերով ընտանիքները նույնպես անմայր պիտի համարել և սրանց ել նույն ձևով մայր տալ. սրբանց մայրերը, նոր մայր տալուց մի օր առաջ, պիտի սպանված լինի:

Թե ինչպես պետք է ուղղել ավելի ուշ հայտնաբերված բոռածու մեղուներով ընտանիքները, այդ մասին կը խոսենք հետո:

25. ԱՆՄԱՅՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ

Յեթե պահեստի մայրեր չկան, այն ժամանակ բոլոր յերեք դեպքումն էլ այսպիսի ընտանիքները պիտի միացնել թույլ, բայց մայր ունեցող ընտանիքների հետ (չը պետք է մոռանալ, վոր այս դեպքումն էլ բոռածու մօրը վաղորդ պիտի սպանել):

Մեղվի ամեն մի ընտանիք իր առանձնահատուկ հոտին ունի և այս հոտովն է, վոր մեղուները ճանաչում իրար: Յեթե հաջողվում է յերկու ընտանիքի հոտը միատեսակ դարձնել, այդ դեպքում մեղուներն առանց կռվի միանում են: Այստեղ կնկարագրենք միացման ձևերից մեկը՝ միայն — ամենապարզը և անփտանգը:

Անմայր ընտանիքի բոլոր ավելորդ շրջանակները պիտի հանել և թողնել այնքան, վորքան բավական կլինի մեղուներին խիտ նստելու համար: Մյուս փեթակումն էլ պիտի տեղ ազատել նույն ձևով և բունը բաժանել տիփաբով (միջնատախտակ) — տիփաբը պիտի նստի հատակին և կողքերին այնպես կպչի, վոր մի բաժանմունքից

մյուսը մեղու չանցնի: Տիփաբը փոքրիկ ծակախներ պիտի ունենա, վորպեսզի յերկու բաժանմունքի ողը միախառնվի: Պետք է փակել նաև արկանոցի այն մասը, վորն ընկնում է փեթակի դատարկ կողմը. ուրեմն՝ այս բաժանմունքի մեղուներն փակված պիտի մնան:

Այսպես պատրաստելուց հետո անմայր փեթակի շրջանակները զգուշությամբ պիտի դնել ազատ բաժանմունքում և փեթակը ծածկել:

Այս գործողությունը պիտի կատարել յերեկոյան, մեղուների ներս գալուց հետո:

Յերեք օրից հետո տիփաբը պիտի հանել, շրջանակները մոտեցնել իրար, փեթակը ծածկել և արկանոցով ծուխ տալ:

Այսպիսի նախազգուշություններն ավելորդ են բերքի ժամանակ. այդ ժամանակ մեղուները միանում են առանց կռվի:

26. ԹՈՒՅԼ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Ջահիլ մայրեր ունեցող թույլ ընտանիքներն ուժեղներից պակաս արժեք չունեն և առանձնապես ուշադիր խնամք են պահանջում: Սրանց բունը տիփաբով պիտի փոքրացնել, տաք ծածկել, կեր տալ: Բայց այս բոլորը բավական չէ, վոր նա արագ դարգանա, վորովհետև մեղուների քանակը քիչ է. ինչպիսի մայր էլ լինի թույլ փեթակում, նա հնարավորություն չունի շատ ձու դնելու. անհրաժեշտ է մեղվով ուժեղացնել այսպիսի ընտանիքը: Ուժեղ և առողջ ընտանիքից պետք է տալ մի շրջանակ կնքած հասունացած վորդ: Մի քանի օրից հետո, յերբ տված շրջանակի վորդերը դուրս յեկած կլինեն, մի այլ ուժեղ ընտանիքից նորից տալ մի շրջանակ վորդ: Այսպիսով թույլ փեթակն այնքան մեղվառատ կդառնա, վոր արագ և հաջողությամբ կսկսի առաջ գնալ: Յեթե վոր արագ և հաջողությամբ կսկսի առաջ գնալ: Յեթե ընտանիքի թուլության պատճառը մօր ծերությունն է,

ապա մեր բոլոր ջանքեր իզուր կանցնեն. այդպիսի մօրը պիտի փոխել:

27. ՎՈՐՔԱՆ ՀԱՃԱՆ ՊԵՏՔ Ե ԲԱՆԱԼ ՓԵԹԱԿՆԵՐԸ

Վերը հիշած գարնանային աշխատանքները կատարելուց, այն ե՛ փեթակները մաքրելուց, պաշարը լրացնելուց, մայր տալուց և միացումներից հետո բավական ժամանակ այլևս դործ չկա մեղվախոցում: Անհրաժեշտ է միայն ամեն որ անցնել մեղվախոց և հայել, թե հարձակում չկա՞ արդյոք:

Փեթակները հաճախ բաց անելը բացի փափուցից, վոշ մի ոգուտ չի կարող տալ, մանավանդ գարնանը, յերբ յեղանակը դեռևս ցուրտ է, իսկ տաքությունը փեթակներում այնքան անհրաժեշտ: Ամեն անգամ փեթակը բանալով բունը սառցնում ենք: Բացի դրանից, մեր ամեն մի անժամանակ միջամտություն՝ մեղուների աշխատանքների մեջ ընդհատում է առաջացնում և շատ անգուրեկան է նրանց համար:

Փեթակը պիտի բանալ միմիայն կարիքի դեպքում: Յեվ այս կանոնին պիտի հետևել վոշ միայն գարնանը, այլև տարվա բոլոր յեղանակներին:

Իսկ սկսնակ մեղվապահները, վորոնք հետաքրքրվում են մեղուների կյանքով (և պիտի անպայման հետաքրքրվեն) և ուզում են սովորել, գիտողություններ անել, պիտի ընտրեն մի փեթակ և դործ ունենան նրա հետ:

28. ԳԱՐՆԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԵՐՔԸ

Գարնան առաջին բերքը տալիս է ուռենին, վոր ինչպես հայտնի յե, շատ շուտ է ծաղկում. սա նույնպես առատ ծաղկափոշի յե տալիս: Ուռենուց հետո գալիս են մի քանի տեսակ ծաղիկներ, վորոնք նույնպես քիչ-քիչ նեկտար են տալիս: Այնուհետև գալիս է պտղատու ծառերի ծաղկման շրջանը, վոր զգալի գարկ է տալիս մե-

ղուների վարգացմանը: Մեղուները յեռանդ են ստանում, մայրն ուժեղ թափով ձու յե դնում, ջանիլ մեղուների թիվը որեցոր ավելանում է և բներում հետզհետե շրջանակների պահանջ զգացվում:

29. ԲՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԼԱՅՆԱՑՈՒՄԸ

Այս ժամանակ է, վոր բները ժամանակ առ ժամանակ պետք է ստուգել: Յեթե վերջին շրջանակն արդեն ծածկված է մեղուներով, թեկուզ վոշ բոլորովին, կնշանակի շրջանակ պիտի ավելացնել, միայն պատրաստի, դուրս քաշած բջիջներով. այս ժամանակ դեռ վաղ է մոմաթերթերով շրջանակ տալ: Քանի վոր մեղուները մոմ չեն արտադրում, կարիք չկա մոմաթերթ տալ, վորովհետև փոխանակ բջիջները դուրս քաշելու, մեղուները նրան կծակձկոտեն, կփչացնեն:

Յերբ բերքն ուժեղանում է և մեղուներն սկսում են մոմ դուրս քաշել ու մենք բների պակասը պիտի լրացնենք մոմաթերթերով, այս դեպքում հետ ենք քաշում վերջին շրջանակը և մոմաթերթը դնում յերկրորդ տեղը:

Անփորձ մեղվապահներից շատերը մոմաթերթով շրջանակը դնում են բնի մեջտեղը, վորով շրջանակների մեջ, այն նպատակով, վոր մեղուները շուտ դուրս կքաշեն չեչը: Այս բանն անթույլատրելի յե, վորովհետև սա ուր և անպատրաստ շրջանակով բունը բաժանում ենք յերկու մասի և սառցնում ենք նրան. բացի դրանից, մոլորության մեջ ենք դցում թե մեղուներին և թե մօրը:

30. ՎՈՐԴԻ ԱՐԱԳ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՍՈՐԸ ԶՈՒ ԴՆԵԼՈՒ ՏԵՂ ՏՍԼԸ

Բերքն ուժեղանալու հետ միասին արագությամբ աճում է և վորդերի թիվը: Այս ժամանակ ուշադիր հրակողություն պիտի ունենալ, վորպեսզի մայրը միշտ ազատ տեղ ունենա ձու ածելու համար: Շատ է պատահում, վոր մեղվապահի անուշադրության, կամ տգիտության պատ-

ճառով, ընտանիքի զարգացումը հետ ե ընկնում շնորհիվ այն բանի, վոր մայրը ձու դնելու տեղ չունենալով՝ պարապ նստում ե: Պետք ե գիտենալ, վոր մայրը հացերը ձվով լեցնում ե կարգով, առանց ընդմիջումների. ահա այս պատճառով, յեթե վորդ ունեցող վերջին շրջանակի մոտ կանոնավոր հաց չկա, պետք ե բնի հեռու ընկած կանոնավոր կերպով շրջանակները տեղափոխել վորդ ունեցող շրջանակի մոտ:

Զպիտի մոռանալ, վոր լավ մայրերը յերբեմն վորդով լեցնում են գրեթե ամբողջ բունը 10—11 շրջանակ: Վորդով հարուստ այսպիսի փեթակներն են գալիք գլխավոր բերքի հաջողութեան գրավակներ:

31. ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ ՄԱՅՐԵՐ ՀԱՆԵԼԸ

Արհեստական յեղանակով մայրեր ստանալու կարիք լինում ե բոլոր մեղվանոցներում: Նախ կարիք ե լինում ծերացած մայրերը միշտ փոխելու ե ապա այդ մայրերը կամ մայրաբջիջները պետք են գալիս, յերբ մեղվապահը ցանկութեամբ ունի իր մեղվանոցը մեծացնելու արհեստական ձագի միջոցով:

Արհեստական յեղանակով մայրեր ստանալու շատ բարդ ե կատարելագործված ձևեր կան. այստեղ այդ ձևերը չենք նկարագրի, մանավանդ վոր այդ ձևերը գործադրում են խոշոր արդյունաբերական մեղվանոցներում. կնկարագրենք մայր ստանալու ամենապարզ ձևը միայն:

Յերբ մեղվանոցում արդեն բոռեր են յերևում, կարելի յե ձեռնարկել մայրեր հանելու աշխատանքին:

Պետք ե ընտրել իր ջանասիրութեամբ ե արդյունավետութեամբ աչքի ընկած վորևեք ընտանիք ե վորբացնել, այսինքն մորը վերցնել. տիփարով բունը փորբացնել, յեթե պաշարը բիշ ե՝ ավելացնել ե տաք ծածկել: Վերցրած մոր համար կազմել մի արհեստական ձագ (տես 37-րդ գլուխ): Այսպիսի փեթակը մայրաբջիջներ կշինի: Յերեք-

չորս որից հետո պարզ կլինի, թե քանի մայրաբջիջ կա: Յեթե մայրաբջիջների թիվը բավարար չե, մեղապահը կարող ե նույն ձևով վարվել մի ուրիշ փեթակի հետ: Շատ նպատակահարմար ե այս փեթակներին 5-6 որվա ընթացքում (մորը վերցնելուց հետո) ամեն որ կեր տալ:

9-րդ կամ 10-րդ որն այս մայրաբջիջները պիտի գործադրված լինեն, հակառակ դեպքում մայրերը կարող են դուրս գալ ե միմիանց կոտորել:

Անփորձ մեղվապահներին թյուրիմացութեան մեջ չգցելու համար, անհրաժեշտ ե մի փոքրիկ բացատրություն:

Մենք արդեն գիտենք, վոր մայրացու վորդը լիովին զարգանում ե 16-րդ որը: Մայրաբջիջները մենք գործադրում ենք 9-րդ կամ 10-րդ որն այն պատճառով, վոր մեղուները նրանց կարող են շինած լինել վոչ թե ձվից, այլ մի յերկու արական վորդից, այս դեպքում հասունացած մայրեր կունենանք վոչ թե ընտանիքը վորբացնելուց 16 որ հետո, այլ ավելի շուտ:

Մայրաբջիջները վերցնելիս պետք ե մի կամ յերկու հատ թողնել այդ ընտանիքին: Միմիանցից կպած յերկու մայրաբջիջը բաժանելու փորձ չպիտի անել ե յերկուսը հաշվել մի մայրաբջիջ:

Մայրաբջիջներ կարելի յե ստանալ նաև ծերացած մայրերով ընտանիքներից. այս դեպքում մորը պիտի սպանել: Բայց պիտի նկատի ունենալ, վոր մայր հանող փեթակը ուժեղ պետք ե լինի. թույլ փեթակից լավ մայրեր ստանալը դժվար ե:

32. ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ՄԱՅՐԱԲՋԻՋՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՏԱԼ

Յերբ արդեն հասունացած մայրաբջիջներ ունենք, պետք ե սպանել մեղվանոցի բոլոր ծերացած մայրերին ե մի բանի ժամից հետո, կամ հետևյալ որը մայրաբջիջները բաժանել:

Նախորդ պետք ե անմայր փեթակի կենտրոնի վոր-

դով հացերից մեկի վրա վերի մասում գրպանի դանակով կտրել, բաց անել մի անցք՝ բառանկյունի, յետանկյունի կամ ձգածն— ում ինչպես հարմար է— ապա անցնել այն փեթակին, վորտեղ մայրաբջիջներն են: Մեկը հանում է պահում է շրջանակը, մյուսը՝ դանակով կտրում հանում է մայրաբջիջը մի կտոր չեչի հետ միասին, նույն ձևի և չափի, ինչպիսի տեղ բացված է առաջին փեթակում: Թե կտրելու, թե տանելու և թե տեղավորելու ժամանակ մայրաբջիջի դիրքը չպիտի փոխել. զգուշությամբ պիտի դնել բացված անցքի մեջ, առանց մաս դիպցնելու իրեն, մայրաբջիջին և ապա չփերով, կամ սրած լուցկով ամրացնել մայրաբջիջն հացին: Հասկանալի չէ, վոր այդ չփերն ել մայրաբջիջին չպիտի դիպչեն:

Այս կարիքը լրացնելուց հետո, մայրաբջիջներից պիտի կազմել նուկլեոսներ արհեստական ձագերի, կամ մյուս տարվա պահեստի մայրեր ունենալու համար:

33. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ՆՈՒԿԼԵՈՒՍՆԵՐ ՊԱՇԵՍՏԻ ՄԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Նուկլեոսների համար գործ են ածում հատուկ շինված փեթակներ, բաղկացած յերկու բաժանմունքից, ամեն բաժանմունքը 3-4 շրջանակով: Այս նպատակով կարելի չէ գործածել նաև մեր սովորական փեթակները, բաժանելով նրան 2 տախտակով՝ յերեք մասի: Յեթե մեր փեթակը 12 շրջանակավոր է— կստանանք յերկու բաժանմունք 3-ական շրջանակով և մեկը՝ չորս շրջանակով: Ամեն բաժանմունք առանձին արկանոց պիտի ունենա. կողքերի բաժանմունքների համար. լավ է արկանց բանալ հետևի պատից:

Վոր և է ուժեղ և առողջ ընտանիքից հանել մի շրջանակ սերեկած վորդով և վրան նստած մեղուններով դնել նուկլեոսի մեջ. վերցնել ելի մի շրջանակ մեղուններով առանց վորդի և մի ուրիշ շրջանակ ել մեղրով (կարելի չէ ուրիշ փեթակից) և դնել նուկլեոսի մեջ: Մեղունների

մի մասը կվերադառնա իր նախկին տեղը. մյուս որը յեթե պարզվի, վոր մեղու այնքան քիչ է մնացել, վոր վորդով շրջանակը բավականաչափ չեն ծածկում, նույն փեթակից նուկլեոսի արկանոցի առաջ մի շրջանակ մեղու պիտի թափ տալ: Այս ձևով զանազան փեթակներից մեղ հարկավոր քանակությամբ նուկլեոսներ ենք կազմում:

Այս գործողությունը պիտի կատարել տաք որ, առաջիկայան ժամի 10—11-ին, յերբ հասակով մեղուններն աշխատանքի յեն գնացած լինում և բնում գլխավորապես ջահիլներն են մնում:

Պետք է ուշադիր լինել և շրջանակի հետ մօրը չտանել նուկլեոս:

Նույն յերեկոյան նուկլեոսին, վերևում նկարագրած ձևով, հասունացած մայրաբջիջ պետք է տալ:

34. ԻՆՉՊԵՍ ՄԱՅՐ ՏԱԼ ԲՈՒԱԾՈՒ ՄԵՂՈՒՆԵՐՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Բոռածու մեղունները ձուռն անկանոն շաղ են տալիս բոլոր տեսակի բջիջներում և մի քանի հաս ամեն բջիջում. ձվեր լինում են և՛ բջջի հատակին և՛ կողքերին կալած:

Գարնանային աշխատանքների մասին խոսելիս ասացինք, վոր բոռածու մեղուններով փեթակները պետք է միացնել, վորովհետև նրանք մայր դժվարությամբ են բնդունում. իսկ յեթե բոռածու ընտանիքներ պատահում են ուշ, յերբ արդեն փոքր ի շատե բերք կա, այսինքն՝ մայր և հուսիս ամիսներին, այն ժամանակ մայր տալու խնդիրը հեշտանում է, յեթե, իհարկե, ընտանիքը բավականաչափ ուժեղ է և վորպես այդպիսին՝ արժե նրան առանձին պահել:

Պպետք է վոր և է ընտանիքից (լավ է թույլ ընտանիքից ուժեղներին այս ժամանակ հետ չզցել) մօրը վերցնել և վանդակով դնել բոռածու ընտանիքում, ապա այդ յերկու փեթակները տեղավորել, մեկը մյուսի տեղը դնելով: Վորբացած ընտանիքի մեղունները կմանեն բոռա-

ծու ընտանիքը, հետևապես կընկնեն իրենց մոր մոտ, իսկ բոլածու ընտանիքի մեղուները մի մասը կանցնի փորբացած ընտանիքը: Յերբ յերեք որից հետո մորը բաց թողնենք վանպակից, նա կունենա իր հարազատ մեղուների պաշտպանութիւնը և կընդունի:

Վորբացած ընտանիքն իրեն համար մայր կհանի. իսկ յեթե հասած մայրաբջիջ ունենա՝ կտանք նրան և գործը 10-12 որով առաջ կգցենք:

Ինչու նույն բանը չի կարելի դարձանն անել: Վորովհետեւ գարնանը չի կարելի փեթակները մեկը մյուսի տեղը դնել. մեղուներն ոտար փեթակ ընկնելու՝ կկոտորվելին: Այս բանը չի պատահում, յերբ մեղուներն զբաղված են բերքով և տուն են վերադառնում մեղրով ծանրաբեռնված:

Ազատելով մեղուներին այս հատկութիւնից, կարելի չէ թույլ և ուժեղ փեթակների տեղափոխութեամբ ուժեղացնել թույլերին:

35. ԿԵՐԻ ՊԱՀԱՆՁՆ ԱՍՍՈՎԱ ՍԿԶԲԻՆ

Մեր յերկրի լեռնային մասերում մայիս և հունիս ամիսները մեղուների զարգացման ամենաուժեղ շրջանն է: Այս ժամանակ է, փոր մայրը հանգես է բերում ձու դնելու իր ամբողջ թափը: Ամեն ուր դուրս են գալիս հազարավոր վորդեր, փորոնք մեծ բանակութեամբ կեր են պահանջում: Այս ժամանակ է, փոր փեթակի պաշարը արագ սպառվում է, փորովհետեւ ընդմիջումներով փոքրիկ բերքերը չեն ծածկում որեկան ծախքը: Այս ժամանակ աշաւուրջ հսկողութիւնն պիտի ունենալ, փորպեսդի փեթակը և փոշ մի վայրկյան առանց պաշարի չմնա:

36. ՇԱՀԱԴԻՏԱԿԱՆ ԿԵՐԱԿՐՈՒՄ

Ինչպես տաացիներ, փորպեսդի մեղովի ընտանիքն արագ զարգանա, անհրաժեշտ է, փոր նա միշտ ել ապահովված լինի առատ պաշարով:

Մեղվապահները մի ուրիշ միջոցի ել յեն դիմում այդ զարգացումն ել ավելի արագացնելու և ուժեղացնելու համար: Այս միջոցը կոչվում է շահադիտական կերակրում:

Պաշարով ապահովված փեթակն անհամեմատ ավելի արագ է զարգանում, յերբ ընտանիքը զբոսից ել ամեն ուր շատ թե քիչ բերք ունի: Այս դեպքում մեղուները մորն առատ կերակրելով ավելի յեն խրախուսում նրան ձու դնելու և հիշած պաշարն անյերկյուղ ծախսում են արագ բազմացող վորդերի վրա: Նկատի ունենալով այս հանգամանքը, մեղվապահները դիմում են հետեյալ միջոցին՝ ամեն ուր, կամ ուր ու մեջ, քիչ-քիչ շաքարաջուր են տալիս մեղուներին (քառորդ ֆունտից մինչև կես ֆունտ, մոտավորապես կես բաժակ) և այսպիսով խաբում են նրանց. մեղուները, կարծելով թե դրսում բերք կա, անում են այն, ինչ ասացինք վերևում: Ահա շահադիտական կերակրման ելութիւնը:

Այժմ տեսնենք, թե ինչ պայմաններ են պետք, փորպեսդի մենք վստահորեն այս ձևի կերակրման դիմենք, ինչպիսի շաքարաջուր պիտի տանք և ինչպես:

Շահադիտական կեր ստացող ընտանիքի բունը պետք է անպատճառ տաք լինի: Բարակ պատերով ծակ ու ծուկ ունեցող և վերեկից վատ ծածկված փեթակում այս ձևի կերակրում յերբեք չի կարելի գործադրել:

Այսպիսի ընտանիքը պիտի առատ պաշար (10-15 ֆունտ) ունենա: Յեթե մեղր չունի, պետք է տալ թանձր յեփած շաքարաջուր:

Յեթե վերը հիշած յերկու պայմանը չկա, այս ձևի կերակրման չպիտի դիմել, փորովհետեւ դիմելու դեպքում՝ բացի վնասից ոգուտ չենք ունենա:

Շահադիտական կերակրման համար պիտի գործածել չրալի շաքարաջուր—մի մաս շաքար, յերկու մաս շուր:

Շաքարաջուրը պիտի տալ յերեկոյան՝ ապակե կամ սպիտակ թիթեղի ամաններով, ամանների բերանը պիտի կապել քաթանի կտորով և շուտ սված դնել շրջանակների

վրա: Շրջանակների ծածկոցների մեջ, բնի կենտրոնի զի-
մաց, ամսաններին համապատասխան ծակեր պիտի բանալ-
ամսանները վերցնելուց հետո այս ծակերը պիտի ծածկել:
Առավոտյան ամսանները պիտի վերցնել:

Այսպիսի կերակրումը մենք կատարում ենք ուրիշ
ձևով, վոր մի քիչ կոպիտ և անհարմար կարող է թվալ:
Փեթակը բանալով չափնիկի բարակ ծորակով շաքարաջու-
րը զգուշութամբ լեցնում ենք շրջանակների արանքում
խմբված մեղուների վրա, ամեն արանքում քիչ-քիչ: Այս-
պիսով կես բաժակաչափ շաքարաջուրը կաբելի յե ցրվել
այնպես, վոր նա հատակին չհասնի:

Կարծում ենք, վոր այս ձևն ավելի պիտի զրգուի և
յեռանդի բերի մեղուներին: Այս ձևից մենք համենայն
դեպս անհարմարություն չենք նկատել:

Շահագիտական կերակրումը գլխավոր բերքից 45-50
որ առաջ պիտի սկսել:

Մեր լեռնային շրջաններում գլխավոր բերքն սկսվում
է հուլիսի առաջին օրերին՝ 1—5-ը հետ գնալով 45-50 որ,
կտանանք մայիսի 15—20-ը, ուրեմն մոտավորապես այս
ժամանակից պիտի սկսել կերակրումը: Տաք շրջաններում
ավելի շուտ պիտի սկսել: Համենայն դեպս ինքը մեղվա-
պահը պիտի լավ գիտենա իր տեղի պայմանները, գլխա-
վոր բերքի սկիզբը և ըստ այնմ գոտավորի շահագիտա-
կան կերակրման գործը:

Յեթե կան շրջաններ, վորտեղ մինչև գլխավոր բերքն
անընդհատ փոքրիկ բերքեր կան, շահագիտական կերա-
կրումն, իհարկե, ավելորդ է դառնում:

37. ԱՐԶԵՍՏԱԿԱՆ ԶԱԳ

Մեղվանոցն արագ մեծացնելու ուղիղ և կարճ ճանա-
պարհը՝ արհեստական ձագն է: Այս միջոցին զիմող մեղվա-
պահը պիտի գիտենա, ոտկայն, վոր զրկվելու յե բերքից:
Արհեստական ձագ վերցնում են գլխավոր բերքից 15-20
որ առաջ. բերքի նախորդակին թուլացնելով ընտանիքը,

մենք շատ թուլացնում, կամ հաճախ բոլորովին զրկվում
ենք բերքից, մանավանդ, յեթե բերքի պակաս տարի յե:
Բայց յեթե մեղվապահը վորոշել է իր փեթակների թիվն
ավելացնել և հաշտվել է մեղրից զրկվելու մտքի հետ,
այդ իր գործն է:

Մեր պայմաններում արհեստական ձագ վերցնելը մի
ուրիշ մեծ վտանգի հետ է կապված:

Հայտնի յե, վոր մեր յերկրում խիստ տարածված է
փտախտ հիվանդությունը: հաճախ է պատահում, վոր մենք
անուշադրությամբ ձագ վերցնում ենք հիվանդ փեթակից
և հիվանդության մի ոջախը դարձնում ենք յերկու: Այս-
պիսի սխալի մեջ ընկնում են նույնիսկ փորձված մեղվա-
պահները:

Պարզ է, ուրեմն, վոր մեր պայմաններում շատ ըզ-
գույշ պիտի մոտենալ արհեստական ձագ վերցնելու խըն-
դրին և այն մեղվանոցներում, վորտեղ հիվանդությունը
լուրջ կերպարանք ունի՝ ուղղակի պիտի հրաժարվել այդ
ձևով փեթակ ավելացնելու մտքից:

Ձագ վերցնելուց առաջ ընտանիքը պիտի քննել ա-
մենայն ուշադրությամբ, և առողջ գտնելուց հետո միայն
կարելի յե ձագ վերցնել:

Քիչ փորձառություն ունեցող մեղվապահներին շփո-
թության մեջ չձգելու համար ձագ վերցնելու բազմաթիվ
ձևերից նկարագրենք միայն յերկուսը:

1. Մի դադարկ փեթակ ենք դնում այն փեթակի
մոտ, վորից ձագ պիտի վերցնենք այնուհետև վորոշում
դանում ենք մորը և այդ շրջանակը մորով ու մեղունե-
րով դնում ենք դադարկ փեթակում. դնում ենք նաև մի
շրջանակ վորդ առանց մեղուների (չմոռանաք, վոր այս-
պիսի շրջանակը թափ տալ չի կարելի, խողանալով պիտի
ավելի մեղուներին), ապա դնում ենք մի յերկու շրջա-
նակ ևս առանց վորդի և մեղուների այս շրջանակները
պիտի հարմար լինեն ձու դնելու համար և լավ է, վոր մի
քիչ ել մեղր ունենան: Այս բոլոր շրջանակները դրվում

են վորդով շրջանակների յերկու կողմից. այնուհետև պիտի ավելացնել մի յերկու շրջանակ ել մոմաթերթով:

Այսպէս պատրաստելուց հետո տեղից վերցնում ենք փեթակը, նորն իսկույն դնում նրա տեղը, իսկ հինը հեռացնում:

Դաշտ թռչող մեղունների մեծ մասը կհավաքվեն առաջվա տեղը դրված նոր փեթակի մեջ: Այս փեթակում կլինեն մայրը, յերկու շրջանակ վորդ և համարյա բոլոր աշխատող մեղունները: Տեղից հեռացրած փեթակում մնում ե վորդի մեծագույն մասը և բոլոր ջահիլ մեղուններն առանց մոր: Սրան պիտի տալ կամ մայր՝ յեթե կա, կամ՝ հասած մայրաբջիջ, վոր նախորոք պատրաստած պիտի ունենանք վերևում նկարագրած ձևով: Ինչ ասել կուզի, վոր մայր տալը շատ կարագացնի այս ընտանիքի զարգացումը:

Արհեստական ձագ կարելի չե վերցնել այնպիսի ընտանիքից, վորն առնվազն վեց շրջանակ վորդ ունի. վորդով շրջանակների թիվը վորքան ավելի լինի, այնքան լա:

Գերադասելի չե ձագ վերցնել միջակ ուժի ընտանիքներից, ուժեղները թողնելով մեղրաբերքի համար:

2. Առաջին ձևով մենք մի փեթակից մի ձագ վերցրինք. մի ձագ կարելի չե վերցնել և յեկու փեթակից:

Նախորոք ընտրում ենք յերկու փեթակ, վորոնցից պիտի վերցնենք ձագը. մեկն անվանենք № 1-ին, մյուսը՝ № 2-րդ: Դադարկ փեթակը դնում ենք № 1-ի մոտ. բայց ենք անում փեթակը, գտնում ենք մորը և շրջանակով դնում դադարկ փեթակի մեջ. նույն փեթակից դնում ենք ելի յերկու-յերեք՝ առանց վորդի շրջանակ իրենց մեղուններով, և այսպիսով № 1-ից դադարկ փեթակի մեջ դնում ենք մորը և 3-4 շրջանակ մեղուններով: Մյա մնացած տեղը լեցնում ենք մոմաթերթած շրջանակներով: Այնուհետև № 1-ը վերցնում ենք և տեղը դնում նոր փեթակը. սրա առաջը փոփոխում ենք մի սովան և ապա № 1-ից շրջանակները մեկ-մեկ հանելով, թափ ենք տալիս կամ տ-

վելում բոլոր մեղուններին սովանի վրա. թափ տված մեղունները քաշվում են նոր փեթակը՝ իրենց մոր մոտ: № 1-ին փեթակում մնում են բոլոր վորդով շրջանակները առանց մեղունների: № 1-ին փեթակը տանում դնում ենք № 2-ի տեղը, իսկ վերջինս հեռացնում-դնում ենք մի ուրիշ տեղ: № 2-ի այն բոլոր մեղունները, վորոնք դաշտ են թռչում՝ հավաքվում են իրենց նախկին տեղը՝ № 1-ին փեթակի մեջ:

Այսպիսով մի փեթակից վերցնում ենք ամբողջ վորդը, մյուսից մեղունների մի մասը և կազմում նոր ընտանիք: Այս ընտանիքին նույնպէս պիտի մայր կամ հասուն-նացած մայրաբջիջ տալ: Յեթե այսպիսի ընտանիքին մայր կամ մայրաբջիջ չենք տալիս, այն դեպքում ընտանիքն իր համար մայրաբջիջներ ե շինում և հաճախ ձագ ել ե տալիս: Յեթե ցանկալի չե, վոր ընտանիքը ձագ տա, այն դեպքում յոթ որից հետո բոլոր մայրաբջիջները պիտի վոջնացնել, թողնելով մեկը:

Ինչպէս տեսնում ենք, ձագ վերցնելու այս ձևը գերադասելի չե, վորովհետև ընտանիքները շատ չեն թուլանում և նույնիսկ արդյունք ել են տալիս:

Արհեստական ձագը պիտի վերցնել տաք և պայծառ որ, առավոտյան ժամի 11-ից մինչև 2-ը:

38. ԲՆԱԿԱՆ ՁԱԳ

Մեղունների բազմանալու բնական ձևը՝ ձագ տալն ե: Բնական ձագն ել ունի իր պակասություններն ու առավելությունները: Պակասությունն այն ե, վոր ձագ տալու տրամադրվող ընտանիքը ձագ տալուց մի յերկու շաբաթ առաջ սաստիկ թուլացնում ե իր գործունեությունը: Յեվ վորովհետև այս տրամադրությունն ստեղծվում ե գլխավոր բերքի նախորդակին և ընթացքում, ուստի այդ անգործունեությունն զգալի կերպով ազդում ե մեղրի բանակի վրա: Ձագ տալն ել խիստ թուլացնում ե փեթակը, վորովհետև մեղունների մի մասը դուրս ե գա-

լիս: Այս և պատճառը, վոր մեղվանոցը մեծացնելու ցանկությունն չունեցող խոշոր մեղվապահները, վորոնք ուզում են շատ մեղր ստանալ, ամեն կերպ աշխատում են ձագի առաջն առնելու միջոցներ հնարել: Բայց այս նպատակին նրանք հասնում են միայն մասամբ: Մեղունների ձագ տալու բնագործը լիովին խեղդել առայժմ չի հաջողվում:


Առավելությունն այն և, վոր մեղվանոցի մեջ մեծ կենդանությունն և առաջանում. բնական ճանապարհով փոխվում են մայրերը, կազմվում են մաքուր բներ ջահիլ մայրերով. այս շրջանի մայրերն ավելի լավն են, բան դարնան հանածը:

Բնական ձագը ցանկալի յե մանավանդ փտախտով վարակված մեղվանոցներում: Հիվանդ ընտանիքներից դուրս յեկած ձագերը վարակված չեն լինում և ուրեմն առողջ ու մաքուր ընտանիքներ ենք ստանում:

Ձագի տրամադրվող փեթակը մայրաբջիջներ և շինում և յերբեմն չափազանց շատ (իմ մեղվանոցում հաշվել եմ 63 մայրաբջիջ մի փեթակում): Նոր շինած մայրաբջիջների մեջ մայրը ձու յե դնում. յերբ այս մայրաբջիջները հասունանում են և նոր մայրերն արդեն դուրս գալու մոտ են, հին մայրը մեղունների մի մասի հետ բաժանվում դուրս և գալիս փեթակից: Դուրս յեկած ձագը մի առժամանակ պտույտներ և գործում մեղվանոցի գլխին և ապա ընտրելով մի հարմար տեղ, իջնում և կծիկ և կազմում: Ձագ իջնելու ամենահարմար տեղը ծառերի ճյուղերն են: Ծառագուրկ տեղերում ձագն իջնում և բարերի վրա, վոր և և գերանի դուրս ցցված ծայրին, խոտերի վրա և այլն:

Յեթե ձագն իջել և ծառի վրա, ձագակալը՝ բերանը դեպի վեր բռնած, պիտի պահել ձագի տակ և ձեռքի կարճ ու կարուկ ցնցումով մեղուններին թափ տալ մեջը. կամաց-կամաց ձագակալը թեթել (այնպես, վոր մեղունները ժամանակ ունենան ճանկերով բռնելու ձագակալից և չթափվեն), ապա կախել ծառից: Թռած և թափված

մեղունները կսկսեն մտնել ձագակալը. մի մասը նորից փորձ կանի բարձրանալ հին տեղը. այդպիսիներին ծխով, խոտով կամ ծառի ճյուղով պիտի վեր կացնել և սրանք էլ կմիանան մյուսների հետ:



Ձագակալ

Յեթե ձագն իջնում և դեռնին, քարի կամ գերանի վրա, այս դեպքում ձագակալը պիտի պարկեցնել մոտը և փայտի զգալով կամ շերեփով զգուշությամբ վերցնել և ամել ձագակալի մեջ. մնացած մեղուններին պիտի քշել խոտով կամ ծխով:

Ծառագուրկ տեղերում լավ և մեղվանոցի մոտ, հողի մեջ անկած յերկար ձուկերի վրա մի յերկու ձագակալ ունենալ: Այսպիսի ձագակալները, յեթե սկսեցրած են և մեջերն էլ մի կտոր չեչ և ամբացրած՝ զբաղվում են ձագերին: Յեթե ուռից դործած ձագակալներ չկան (նկարում ցույց տված ձևով), կարելի յե փոքրիկ արկղներ դործածել: Հարմար ձագակալ կարելի յե շինել նաև ծառի կլեպից, վորը նկարում ցույց տվածի նման ձագարածե պիտի վորդել:

Մինչև ձագը վերջնականապես կհավաքվի, կհանդուստնա, պետք և պատրաստել փեթակը, դնել իր տեղը. մեջը շարել ձագի մեծությանը համապատասխան թվով մոմաթերթով շրջանակներ (լավ և մի յերկու պատրաստի շրջանակ տալ): Շրջանակներն իրար շատ մոտ պիտի շարել, համարյա կպած. այս արվում և այն նպատակով, վոր մեղուններին հնարավորություն չտանք մեծ խմբերով հավաքվելու շրջանակների արանքում, վորովհետև նրանց ծանրությունից և տաքությունից մոմաթերթերը պոկվում

են: Մի յերկու որից հետո, յերբ չեչը մասամբ դուրս քաշած կլինեն՝ շրջանակների հեռավորութիւնը պիտի կանոնավորել:

Փեթակն այսպէս պատրաստելուց հետո ձագակալն զգուշութեամբ պիտի բերել և զգալով կամ շերեփով մեղունները հանել ու թափ տալ արկանոցի առաջ. ձագակալում մնացածներն ել պիտի թափ տալ: Կարելի չե՞ ձագակալը միանգամից թափ տալ փեթակի առաջ փռած սավանի վրա, կամ ուղղակի փեթակի մեջ: Առաջին ձևը գերազասելի չէ:

Այս բոլոր գործողութիւնների ժամանակ պիտի ըզգուշ լինել, վորպեսզի մայրը չվնասվի:

Ձագը սովորաբար չի խայթում, պիտի աշխատել վստահ, առանց վախենալու:

Մենք գիտենք, վոր առաջին ձագի հետ դուրս ե գալիս հին մայրը: Պատահում ե և այլ կերպ: Առաջնաձագը դուրս ե գալիս նոր՝ չրեղմնավորված մոր հետ: Այսպէս պատահում ե այն ժամանակ, յերբ մեղվի ընտանիքն այս կամ այն պատճառով զրկվել ե մորից և մայրաբջիջներ ե պատրաստել նոր մայր ստանալու համար: Յե՞վ յեթե այս բանը պատահում ե ձագ տալու շրջանում, այդպիսի փեթակներից առաջին ձագերը դուրս են գալիս նոր մայրերի հետ և այդպիսի ջահիլ, չրեղմնավորված մայրերով ձագերը կոչվում են յերգող առաջնաձագեր:

Ձագ ափսոս փեթակը և ձագ տալու որը պիտի նշանակել հուշատետրում. այս անհրաժեշտ ե հետագա աշխատանքների համար:

39. ՅԵՐԿՐՈՐԴ ԶԱԳ

Առաջին ձագից 8 որ հետո—9-րդ որը դուրս ե գալիս 2-րդ ձագը, այս անգամ արդեն ջահիլ մոր հետ. այս ձագի հետ հաճախ մի քանի մայրեր են լինում: Յերկրորդ ձագին անհրաժեշտ ե տալ մի շրջանակով ձու կամ ջահիլ վորդ (քանակութիւնը նշանակութիւն չունի): Բացա-

տրենք՝ ինչու: Ջահիլ մայրը մի քանի որից հետո դուրս ե թռչում բորի հետ զուգավորվելու. մեղունները վախենալով, վոր կարող են զրկվել նրանից, նույնպէս դուրս են գալիս (իհարկե վաղ միշտ): Այս ձագը սովորաբար նստում ե վոր և ե տեղ, յերբեմն ել փախչում ե: Փախչող ձագը սովորաբար նման պտույտներ չի գործում, այլ ուղիղ զծով և արագ հեռանում ե. այս դեպքում ամենավին միտք չկա նրա հետևից վագելու. պիտք ե միայն բորի ճանապարհ մաղթել:

Իսկ յերբ ձագին ձու յենք տալիս, նա մոր դուրս գալուց չի անհանգստանում, վորովհետեւ մոր կորչելու դեպքում (վոր յերբեմն պատահում ե) նա հնարավորութիւն ե ունենում աված ձվերից մայր պատրաստելու:

Յերկրորդ ձագի վրա հսկողութիւն պիտի ունենալ, վորովհետեւ, ինչպէս ասացինք, մայրերը յերբեմն թուլից չեն վերագտնում, վոչնչանում են զանազան պատճառներից: Այսպիսի ձագերի փեթակի արկանոցով ջահիլ մայրեր պիտի բաց թողնել կամ հասունացած մայրաբջիջ տալ: Յերբ այս փեթակում նոր ածած ձվեր նկատվեն, կնշանակի ամեն ինչ բարեհաջող ե:

40. ԶԱԳ ՏԱԼՈՒ ՏԵՆԴԸ

Յերբ ընտանիքը բռնվում ե, այսպէս ասած, ձագ տալու տենդով, նա վոչ միայն յերկրորդ ձագն ե տալիս, այլ 3-րդը, 4-րդը, 5-րդը: Այս յերևույթը բոլորովին բնական չէ, վորովհետեւ մայր փեթակը բոլորովին թուլանում ե: Ամենաշատը կարելի չե յերկու ձագ թույլ տալ, իսկ ով ուզում ե հետագա ձագերի առաջն առնել. առաջին ձագը պիտի դնի մոր տեղը, մորը հեռացնի մի այլ տեղ և արկանոցը դնի դեպի հյուսիս. 6—7 որից հետո յել բոլոր մայրաբջիջները, բացի մեկից, կտրախ:

Յերկրորդ ձագը դուրս ե գալիս յերկրորդից յերեք որ հետո, իսկ հետագա ձագերը դուրս են գալիս անկանոն, լերբ և ինչպէս պատահում ե:

Ձագ տալու շրջանում պատահող փոքր ձագերը պետք է ոգտագործել նուկլեոսների համար:

41. ԳԼԽԱՎՈՐ ԲԵՐՔ

Գլխավոր բերքը մեր բարձրաձանդակում սկսվում է հուլիսի առաջին թվերից և տևում է 20-30 օր, իսկ հաջորդ տարիներին ել ավելի:

Հունիս ամսի վերջերին բարձր տեղերում, իսկ տափարակներում և տաք տեղերում ավելի վաղ, պիտի պատրաստություններ տեսնել գլխավոր բերքի համար:

Պետք է չեչել վերնահարկերի շրջանակները և շարել վերնահարկերի մեջ. դանակով կամ բերիչով մաքրել բների շրջանակների արանքի մոմերը, վորպեսզի մեղուներն անարգել մուտք ունենան բներից դեպի վերնահարկերը: Վերնահարկ պիտի դնել այն փեթակների վրա, վորոնց բունը բոլորովին լիքն է մեղուներով և յերբ նրանք խիտ նստած են բոլոր արանքներում: Արկանոցներն այդ ժամանակ պիտի բոլորովին բաց լինեն:

Վերնահարկերի մեջ մի շրջանակ պիտի պակաս դնել, այսինքն՝ յեթե 12 շրջանակավոր է, պիտի դնել 11, յեթե 10-նոց է՝ 9-ը: Այսպիսով, նախ՝ մեկական շրջանակի խնայողություն է լինում և յերկրորդ՝ հաստ և հյութալի հացեր են ստացվում:

Յեթե մեղվապահը փեթակը դրել է կշեռքի վրա և նրան հայանի յե որվա բերքի չափը, ուրեմն նա մոտավորապես գիտե, թե յերբ պիտի ստուգի վերնահարկերը. իսկ յեթե չունի, գոնե 2-4 օրը մի անգամ պիտի ստուգի:

Գլխավոր բերքի ժամանակ մի ժամը նույնիսկ մեծ նշանակություն ունի: Ուշացած ստուգումը յերբեմն պարզում է, վոր վերնահարկը բոլորովին լցվել է, և մեղուներն, ազատ տեղ չունենալու պատճառով, անգործության են մատնվել: Յեթե նկատի ունենանք, վոր որվա բերքն ուժեղ ժամանակ կարող է բարձրանալ-հասնել

10--15 ֆունտի, ապա հասկանալի կլինի, թե վորքան վնասաբեր է թեկուզ մի որվա կորուստը:

42. ՄԵՂՐԱՅԱՊՈՑ, ԹԵ՞ ԾՈՐ

Ամենապարզ հաշիվը ցույց է տալիս, վոր մեղրահաց, այսինքն՝ կնքած շրջանակներ վերցնելը բոլորովին ձեռնտու է մեղվապահի համար. մինչև մեղուները 11 շրջանակ կսերեկեն, նույն ժամանակում նրանք կարող են նույն չափով շրջանակ լեցնել մեղրով: Այս պատճառով մեղվապահները թույլ չպիտի տան հացերը սերեկելու, այլ յերբ նրանք լեցված են արդեն և բջիջների ներքևի շրթունքները թեքված են դեպի վեր սերեկելու համար, այդպիսի շրջանակները պիտի քամել և նորից հեռ տալ: Այս ձևով անհամեմատ շատ մեղր կարելի յե ստանալ:

Շրջանակով մեղր կարելի յե ծախել այն դեպքում միայն, յերբ նա ծորից գոնե մեկ ու կես անգամ թանկ է ծախվում:

Առհասարակ պետք է խուսափել հաց մեղր ծախելուց. բացի այն, վոր հաց մեղրը թանկ է նստում, մենք հետևյալ տարին մեղուներին զրկում ենք պատրաստի չեչերից, վոր անագին նշանակություն ունի փեթակի արդյունավետության խնդրում:

Մեր գյուղացիները ծախում են նաև բնի սպիտակ մեղրահացերը. սա արդեն կատարյալ հանցանք է. բնի ամեն մի պատրաստի շրջանակ հետևյալ պարնանն անագին արժեք ունի:

43. ՅԵՐԿՐՈՐԴ ՎԵՐՆԱՅԱՐԿԸ ԴՆԵԼԸ


Յերբ առաջին վերնահարկի բոլոր շրջանակները գոնե կիսով չափ լիքն են և բերքն ուժեղ թափով շարունակվում է, պետք է դնել յերկրորդ վերնահարկը: Նոր վերնահարկը պետք է դնել բնի վրա, իսկ առաջինը սրա վրա:

Յերբեմն պատահում է, վոր մայրը բարձրանում և վերնահարկում ձու յե դնում: Յեթե այդպիսի շրջանակ-

ները մեղվի վորդով են, պետք է թողնել առաջին վերնահարկում բնի վրա, իսկ յեթե բոռի վորդով են, պիտի վերջիններին գլուխները կտրտել դանակով և տեղափոխել վերին վերնահարկը:

44. ՄԵՂՐ ՔԱՍԵԼԸ

Մեղր քամելու համար անհրաժեշտ են հետևյալ դործիքները — մեղրահան մեքենա, դանակ (սրա համար տաք ջուր), վոր և է հարմարեցրած աման՝ սերեկներից կտրած մոմի համար և դուլը, կամ մի այլ աման մեղրահանի ծորակի տակ դնելու համար:



Մեղրահան

լինեն տաշտի բերանին համապատասխան մեծությամբ: Ցանցը լինում է յերկաթալարերից. լավ է յեթե ցանցը կլայեկած լինի: Հակառակ դեպքում կարելի չէ դործածել փլավքամի կամ նույնիսկ սալա, վորոնք պիտի դրվեն մեծ կաթսայի կամ տաշտի վրա: Սերեկը թափում են սրանց մեջ, մեղրը ծակերով ծորում է և ապա ցամաքած սերեկը վերցնում են, տեղ բանալով հետևյալ աշխատանքների համար:

Այս բոլորը պատրաստ լինելուց հետո, փեթակը պի-

Սերեկների մոմի համար կան հարմարեցրած հատուկ ամաններ. այս ամանները բաժանված թանկ են և ձեռք բերելը դժվար: Սակայն այս հարմարությունը կարելի չէ ստեղծել տեղական վարպետների ձեռքով: Շինվում է սովորական տաշտ, վորի վրա դրվում է յերկու ցանցապատ շրջանակ. շրջանակները պիտի շինված

տի բանալ, ուժեղ ծխով մեղուներին վերնահարկից քշել ցած, մնացած մեղուներին էլ խողանակով սրբել շրջանակների վրայից. մաքրած շրջանակները կամ պիտի դարսել մի դադարկ վերնահարկի մեջ և ներս տանել, կամ մեկը հետգհետե ներս պիտի տանի: Սերեկները դանակով վերցնելուց հետո, պիտի դնել մեղրահանի մեջ (8 հատ կիսաշրջանակ, կամ 4 բնի շրջանակ) և պտտել: Պետք է պտտել հավասար, առանց ցնցումների և վոշ շատ արագ, վորովհետև նոր հացերը հեշտությամբ ջարդվում են: Մի յերեսը քամելուց հետո դարձնում քամում են մյուս յերեսը:

Փեթակների մի մասը հետ մնալու պտտառով վերի հարկ չեն վերցնում. այդպիսի փեթակների բնի կողքի շրջանակները պիտի քամել, յեթե բավականաչափ լիքն են:

Մեղր քամելու սենյակը լավ պաշտպանված պիտի լինի, վորպեսզի մեղուները չկարողանան ներս մտնել. այս կարևոր է մանավանդ մեղրաբերքի վերջին:

Պետք է նկատի ունենալ, վոր մեղուները սովորություն ունեն բուռն և վերնահարկը մեղրով լեցնելուց հետո, յերբ իրենց արդեն ապահով են համարում, աշխատանքը վորոշ չափով թուլացնել: Իսկ յերբ նրանց բերածը մենք շուտ-շուտ խլում ենք, մեծ յեռանդի յեն գալիս, դադարկված հացերը նորից լեցնելու համար: Այս պտտառով գլխավոր բերքի ընթացքում մեղրը շուտ-շուտ պիտի քամել, մեղուներին շարունակ լարված աշխատանքի մեջ պահելու համար:

Ի հարկե, այս չի նշանակում, վոր մենք չհասած կամ ջրիկ մեղրը պիտի քամենք. մեղրը հասունացած պիտի համարել, յերբ շրջանակը ցնցելուց չի թափվում բջիջներից. այդպիսի մեղրը, յեթե վորոշ չափով ջուր է պարունակում, ա, դ էլ գործընթացում է ամանների մեջ լեցնելուց հետո:

45 ՄԵՂՐԱԲԵՐՔԻ ՎԵՐՋԸ

Մեղրաբերքի վերջը պիտի իմանալ կշեռքից, վորն այլևս մուտք չի ցույց տալիս, կամ մեղունների վարմունքից: Մեղրաբերքը վերջանալուց հետո, մեղուններն սկսում են դես ու դեն ընկնել՝ մեղր ճարելու համար: Թափվում են մեղրասենյակը, փեթակը բանալիս իսկույն հարձակվում են, չար են դառնում ու խայթում, և վերջապես սկսում են բոռերին հալածել ու կոտորել: Այս բոլոր նշաններից մեղվապահը պիտի հասկանա, վոր ամեն ինչ վերջացած է և աշխատի, վորքան կարելի յե, շուտ վերջացնել աշխատանքները մեղվանոցում: Վորքան ուշանան այս աշխատանքները, այնքան կգժվարանան՝ մեղունների հարձակման պատճառով:

Մեղրաբերքի վերջին լավ ե աշխատանքները յերեկոյան դեմ կատարել, վորպեսզի գոյ մեղունների հարձակումները լուրջ կերպարանք չընդունեն:

Վերնահարկերը վերջին անգամ մաքրելուց հետո կարիք չկա նրանց վերադարձնելու մեղուններին՝ մեղրից մաքրելու համար: Այդ ավելորդ աշխատանք է: Մեղրով թողած մեղրահացերը յերբեք չեն մզվում և ցեց չեն ընկնում:

46 ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՊԱՅԵԼ ՄԵՂՐԱՅՈՒՆԸ

Յերբ քամելու աշխատանքը վերջացած է, ավելորդ շրջանակներն արդեն հավաքված են ու նրանց ձողերի վրայի մոմերը մաքուր քերված, շրջանակները պիտի դասավորել հատուկ պահարանների, կամ վերնահարկերի մեջ և դարսել իրար վրա: Շրջանակները պիտի լավ պաշտպանված լինեն մկներից, վորոնք չեչերին հասնելու դեպքում ահազին փախ են հասցնում—ջարդում են հացիորը, յերբեմն ել բուն են դնում և ճուտեր հանում:

47 ՄԵՂՐԻ ԱՄԱՆՆԵՐ

Մեղրի համար ընդունված է գործ ածել սպիտակ թի-

թեղի ամաններ, վոր բիդոն են կոչվում: Այս ամանները, մեր կարծիքով, մի քանի անհարմարություններ ունեն—նրանք թանկ են և դժվար են ճարվում, դժվար ե մաքուր պահել—ժանգոտում են և ազդում մեղրի համի վրա: Թե սայլով, թե յերկաթեղիով տեղափոխելու համար անհարմար են և սառած-շաքարացած մեղրը սրանց միջից հանելը կատարյալ տանջանք է: Կարծում եմ, վոր այսքան անհարմարություններ ունեցող ամանները պիտի դուրս գցել գործածությունից:

Ամենահարմար ամաններ պիտի համարել տախտակից շինված արկղերը, վորոնք եժան են, չեն ժանգոտում, մեղրը շատ լավ են պահում, նրանց տեղափոխությունը բոլոր ձևերով շատ հարմար ե, իսկ նրանցից շաքարացած մեղրը հանելը՝ շատ հեշտ:

Հարմար են հետևյալ չափի արկղները.—յերկարությունը մի արշին, իսկ խորությունն ու լայնությունը 5.6 վերջուկ: Այսպիսի արկղները տանում են 2-3 փութ մեղր: Ըստ ցանկության և պահանջի, կարելի յե շինել ավելի փոքր, կամ ավելի մեծ արկղներ՝ 5 փութանոց: Արկղների համար ամենից հարմար փայտը՝ լորենինն է:

Այս արկղները պիտի լավ վարպետ շինի: Տախտակների ծայրերն ուղղակի իրար վրա չեն դրվում ու մեխվում, այլ միմիանց հեռ միացվում են լամբով (Փայլց): Արկղի հատակը չորս կողմից նույնպես լամբա պիտի ունենա և վոչ թե վրայից դրվի ու մխվի, այլ նրա հաստություն կեսը պիտի արկղի մեջ մտնի: Հատակի ձևով պիտի շինված լինի և խուփը: Արկղները մեղրով ուղարկվելիս խուփերն ամրացնում են պտուտակով (վինտով) կամ մեխերով: Խուփի չորս կողմը խմորով կամ սոսնձով թուղթ են կպցնում, վոր մեղրը դուրս չհոսի: Մեղր լեցնելուց առաջ արկղի ներսից բոլոր կարերը մոմալ չափիկով պիտի մոմել: Այդպիսի արկղը կարժենա 2-3 ուրբի, գուցե և եժան, նայելով թե վորտեղ ե շինվում: Այսպեսի արկղներ գործածության մեջ կան և շատ հարմար են համարվում:

48 ԳԼԽԱՎՈՐ ԲԵՐՔԻՑ ՇԵՏՈ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վերնահարկերը վերցնելուց անմիջապես հետո, բնե-
րի կարգավորման աշխատանքներ պիտի սկսել: Ամենից
առաջ պիտի ստուգել պաշարը: Հաճախ պատահում է, վոր
ամենաուժեղ փեթակն անգամ, վորի վերնահարկում շատ
մեղր է յեղել, շատ քիչ պաշար է ունենում: Այսպես պա-
տահում է այն դեպքում, յերբ բնաանիքն ունենում է
զորեղ մայր, վորն ուժեղ բերքի ժամանակ բնի շրջանակ-
ների մեծ մասը ձվով ու վորդով լիքն է պահում և բեր-
ված մեղրը վերստին է տեղափոխում: Բերքը վերջանա-
լուց հետո, յերբ մայրն այլևս շատ քիչ ձու յե դնում և
յեղած վորդերն ել դուրս են գալիս, բնում մնում են կի-
սադատարկ հացեր: Շատ ձագ տվող փեթակները և ուշ
դուրս յեկած ձագերն ել պաշարի պահպանություն են ու-
նենում:

Ահա այսպիսի բնաանիքների կերի պաշարը պիտի
լրացնել մեղրաշատ բնաանիքներից վերցրած մեղրով:

Մեղրով լիքը շրջանակները պիտի դնել բնի կողքե-
րին, իսկ կենտրոնում, վորտեղ մեղուները կծիկ պիտի
կազմեն ձմերելու համար, կիսատ շրջանակները. մեղրի
վրա մեղուները չեն կարող ձմերել:

Պետք է նկատի ունենալ, վոր մեր յերկրում ձմեռը
յերկարատե է, իսկ գարունը բերքով աղքատ. այդ պատ-
ճառով անհրաժեշտ է փեթակներում թողնել մի-մի փութ
և նույնիսկ ավելի մեղր: Այս կանոնը, դժբախտաբար, քիչ
է ուշադրության անձնվում և մեր մեղվաճոցների մեծ
մասը գարնան ամիսներին կիսաքաղց վիճակում են լի-
նում, չեն զարգանում և բնականբար արդյունք չեն տա-
լիս:

«Յուլա կերթան» ասում է մեր գյուղացին: Մեղու-
ներն ել նույն ձևով պատասխանում են տիրոջը և նրան
առանց մեղրի «յուլա տանում»:

Անհրաժեշտ է ստուգել այն կասկածելի փեթակները,
վորոնք կարող են անմայր, կամ չբեղմնավորված մայրե-

րով լինել: Այսպիսի փեթակներն են՝ շատ ձագ տվողները
և յերկրորդ, կամ ավելի հաճախ՝ յերրորդ ձագերը: Ան-
մայր բնաանիքներին անմիջապես պիտի մայր տալ, յեթե
կա և կամ միացնել մայր ունեցող բնաանիքներին: Չբեղմ-
նավորված մայրերով փեթակները բոտերին պահպանում
են և դեռևս այդ մայրերը կարող են բեղմնավորվել: Յեթե
միշտ, ոգոստոսի վերջն այդպիսի մայրերն չեն բեղմնավոր-
վում պետք է փեթակներին ուրիշ մայր տալ կամ միա-
ցնել: Պատահում է նաեւ, վոր մայրերն ուշ—սեպտեմբերի
ընթացքում են բեղմնավորվում:

Փոքրիկ, բայց մայր ունեցող բնաանիքներին ուշ աշ-
նանը կարելի յե տեղափոխել մի փեթակում, վերջինս
բաժանելով յերեք մասի: Այդպիսի բնաանիքներն ընդա-
նուր բնում տաք ձմերում են և գարնանը կարելի յե
նրանից մայրերն ոգտագործել տալով անմայր փեթակնե-
րին. նսկ յեթե մոր կարիք չի լինում, այդ բնաանիքնե-
րը մնում են ջուկ-ջուկ բներում և լավ խնամվելու դեպքում
ուժեղանում են:

Սեպտեմբեր ամսվա ընթացքում, յերբ մեղուներն
արդեն բավական պակասած են լինում, ավելորդ-զադարկ
և քիչ մեղրոտ հացերը բների կողքերից պիտի հանել և
տիփարը մոտեցնել: Այս գործն անհրաժեշտ է անել հե-
տեյալ պատճառով:

Մենք արդեն գիտենք, վոր ձմերելու համար մեղու-
ները գերադասում են նստել հացերի զադարկ ներքեի
մասում: Պատահում է, և բավական հաճախ, վոր բնի մեղ-
րոտ հացերը թողած հավաքվում են շատ քիչ մեղր ունե-
ցող, համարյա զադարկ հացերի վրա: Կարճ ժամանակից
հետո, այս շրջանակների վրա նստած մեղուները մեղրն
սպառվելու պատճառով կտուրվում են քաղցից, սառկում
և և մայրը, յեթե այս խմբի մեջ է լինում:

Ամեն մի շրջանակի վրա նստած մեղուներն իրենց
ձմեռվա պաշարը պիտի ունենան նույն շրջանակի վրա,
ինչպես յերևում է մեղուներին քիչ և հաջողվում, պա-

շարը վերջանալու դեպքում, անցնել մի շրջանակից մյուսը:

49 ՄՈՍԸ ՊԱՀԵԼԸ

Յերբ մեղվանոցում բոլոր աշխատանքները վերջացած են, բոլոր շրջանակները քերված են, բոռաբլիճներով և հնացած-սևացած բոլոր հացերը ջարդված, սերեկներից ստացած մոմը (վացված*) պետք է ալս բոլորը հալել, վոր-պեսզի հաջորդ տարվա համար մոմի պաշար ունենալ: Հալելու չեչերը կարելի չե տեսակների բաժանել-մաքուրը հալել առանձին, սեր և կեղտոտն՝ առանձին:

Չեչը պիտի ածել կաթսայի մեջ, ջուր ածել վրան (վորքան շատ ախքան լավ) դնել կրակին և լավ յեփել: Յեթե մեղվանոցում փտախտ կա՝ պետք է յեփել մոտ յերկու ժամ, վորպեսզի փտախտի սերմերը վոչնչանան:

Ջուր շատ պիտի ածել, վորպեսզի մոմը հալելուց հետո ավելի հեշտ ու մաքուր քամվի. բացի դրանից, առատ ջրի մեջ հալած մոմը առաձգական-ճիլ է լինում, իսկ առանց ջրի հալածից շինած մոմաթերթերը լինում է բեկանուտ—այսինքն՝ փխրուն կոտրվող: Հալված մոմը շերեփով պիտի ածել ամուր տուրակի մեջ, բերանը կապել և մոմաճնշիչ մեքենայի մեջ դնելով ճնշել և մոմը հանել:

Վորովհետև այս մեքենան դրսից պիտի բերվի և բավական թանկ արժե, ուստի շատ հարմար կլինի, յեթե մի գյուղի մեղվապահները միասին բերել տան: Մի մեքենան մի գյուղի համար բավական է:

Իսկ յեթե մոմաճնշիչ չկա, մոմը հալելու համար կարելի չե ոգտվել փռերից և թոնիրներից: Հացը թխելուց

*) Թե՛ սերեկների լվանալուց յեվ թե՛ մեղրոտ ամաններից ստացված մեղրաջուրը պետք է յեցնել վորեմի կոտի, կամ տակառի մեջ յեվ տաք տեղ դնել: Մի յերկու շաբաթից հետո մեղրաջուրը խաղողի շիբի նման յեռում յեվ շատ դուրեկան մաճար է դառնում, իսկ ով ուզում է քացախ ունենալ մեջը խմորի խաշ պիտի գցի, կամ մի քիչ քացախ ածի: Մեղրաջրից շատ լավ յեվ համեղ քացախ է ստացվում:

և հանելուց հետո, փռի, կամ թոնրի մեջ մի կաթսա ջուր պիտի դնել և վրան չեչով փրված: չեչը կհալվի և կը ծորի կաթսայի ջրի մեջ: Յեթե փռում կամ թոնրում ջուրը չյեռա, լավ կլինի առանձին ոջախի վրա յեռացնել:

Հալված մոմը վոր և է փայտի կամ թիթեղի ամանի միջ պիտի ածել, ձև տալու համար: Ամանի պատերին ներսից մեղրաջուր կամ սապնաջուր պիտի քսել, վորպեսզի մոմը պատերին չկպչի և հեշտ գուրս դա: Մոմն ամուսից հանելուց հետո սակին կպած կեղտը պետք մաքուր տաշել:

50. ՄԵՂՈՒՆԵՐԻ ՁՄԵՐԵԼԸ

Մեղուների հաջող ձմերեկը յեկող դարնան հաջողության գրավականն է: Ձմերեկը հաջող ենք համարում, յերբ փեթակը ցրտից կամ սովից չի հանգել, յերբ կոտորված մեղուների թիվը քիչ է, յերբ հացերը չեն բորբոսնել, յերբ մեղուների փորլածություն չի յեղել: Վորպեսզի այս յերեույթները տեղի չունենան, մեղուների պաշարն աշնանից լավ կարգավորված պիտի լինի, լավ հատկության և անպատճառ սերեկած պիտի լինի: Մեղուները կատարյալ անգործության մեջ պիտի լինեն և նրանց ամենևին չպիտի անհանգստացնել:

51. ՄԵՂՈՒՆԵՐԸ ԴՈՒՐՍԸ ՊԻՏԻ ՁՄԵՐԵՆ, ԹԵ՛ ՆԵՐՍԸ

Այս հարցը մեղվապահների մեջ վեճի առարկա չե դարձել. վոմանց կարծիքով լավ է, յեթե մեղուները գուրսը ձմերեն, իսկ վոմանք էլ դերազատությունը տալիս են ներսը ձմերելուն: Մեր կարծիքով՝ յուրաքանչյուր մեղվապահ իր շրջանի կլիմայի ու պայմանների համաձայն պիտի վարվի: Յեթե Լոռու տաք ձորերում, Մեղրիում, Արարատյան և Գաղաթի գաղտերում մեղուներին վատան կարելի չե թողնել գուրսը, նույնը չի կարելի ասել Նոր-Բայազետի, Շիրակի և Փամբակի մոտին, վորտեղ ձմեռը յերկարատե է և հաճախ չափազանց ցուրտ:

Պետք և ասել, վոր մեղուները դիմանում են ամե-
նադաժան ցրտերին, բայց իհարկե սա չի նշանակում, վոր
նրանց ցրտի պիտի տալ:

Դուրսը թողած մեղուները հարկավոր տաքությունը
պահպանելու համար ստիպված են անընդհատ շարժման
մեջ լինել, իսկ սրա հետևանքը լինում է այն, վոր մե-
ղուներն, իրենց մարմնի կողքերած ուժը վերականգնելու
համար, շատ մեղր են ուտում: Այսպիսով դուրսը թողած
մեղուները անհամեմատ ավելի շատ մեղր են զործածում
քան ներս դրածները:

Իմ անձնական փորձը ցույց է տվել, վոր յերկու հա-
վատար ուժի ընտանիքներից մեկը զրոյում կերել է 15
ֆունտ մեղր, իսկ միւրը ներսում՝ 7 ֆունտ:

Պրոֆեսոր Կուլապինի ասելով, դուրսը թողած մեղվի
ընտանիքն ուտում է մինչև 19 ֆունտ մեղր, և այս հա-
կանալի յե Ռուսաստանի ցրտերում. իսկ մեր բարձրա-
դիր գավառներն իրենց ցրտերով շատ ել հետ չեն մնում
Ռուսաստանից:

Իհարկե, ծախված կերի քանակը մեղվի ընտանիքի
մեծությունից և կախված, վորքան փոքր է ընտանիքը,
այնքան ել պակաս կուտի, և ընդհակառակն:

Համենայն դեպս դուրսը թողած ընտանիքների ավե-
լի կերածը, նայելով մեղուների թվին, պիտի հաշվել 3-ից
8 ֆունտ, իսկ սա փոքր տարբերություն չէ:

Դուրսը թողած ընտանիքներն անկասկած ավելի յեն
յենթակա յեղանակի ցրտության կամ տաքության տա-
տանումներին, տաք ու հովի—այս պատճառով այդ ըն-
տանիքները հաճախ անհանգստանում են և զարնանը լի-
նում են ուժասպառ և քիչ պաշարով:

Դուրսը թողած փեթակները լավ պաշտպանված լինե-
լու դեպքում՝ այս պահանջությունները մեղմանում են:

Յեթե մեղվապահը զմնազան պատճառներով փե-
թակները ներս չի դնում, ապա նա պիտի պահպանի հե-
տեյալ կանոնները:—

Ընտանիքները պիտի լինեն մեղվաշատ, պաշարն առատ
բնի յերկու կողմից տեփար դրած և դատարկ տեղը լըց-
րած տաքություն պահող վոր և է նյութով, սրինակ՝ դուր-
մանով կամ փայտի թեփով. փեթակները լավ և տաք ծած-
կված պիտի լինեն վերևից: Շատ ցանկալի յե, ձմեռը
դուրսը մնացող փեթակները կրկնակի պատերով լինեն,
հակառակ դեպքում՝ հաստ տախտակից պիտի շինված լի-
նեն: Փեթակների գլխին և կողքերին կիտված ձյունը յե-
թե չի հալվում, պիտի թողնել. նույնիսկ կարելի յե
ձյուն ավելացնել և բոլորովին ծածկել փեթակը, միշտ
բաց և ազատ թողնելով արկանոցները: Այսպես կարելի
յե վարվել այն վայրերում, վորտեղ ցրտերը յերկարատե
են և ձյունը յերկար ժամանակ չի հալվում:

Թույլ ընտանիքները և նուկիւսները դուրսը թող-
նել չի կարելի. սրանք շատ զժվարությամբ են դիմա-
նում ուժեղ ցրտերին և սովորաբար վոջնշանում են:
Սրանց ներսում պիտի պահել:

Վերոնիշյալ կանոնները կատարելուց հետո լավ է փե-
թակները դուրսը թողնել, յեթե հարմար ձմեռանոց չկա:

Նախ քան ձմեռանոցի խնդրին անցնելը մի յերկու
խոսք ասենք այն մասին, թե մեր գյուղացիներն ինչպի-
սի ձմեռանոցներումն են պահում մեղուներին:

Ինձ պատահել է տեսնել փեթակները կտուրին, ար-
կանոցները լավ ձեփած. թոնրատանը՝ արկանոցները դարձ-
յալ լավ ձեփած և թաղիքով կամ կարպետով ծածկած.
այս թոնրատանը հաց ել են թխում:

Պատահում է նաև, վոր ձմեռը մեղուներին պահում
են գոմի կամ մարագի շարդախում, վոտնատակի, կամ
վոր և է խարխուլ սենյակում, հաճախ առանց պատուհան-
ների:

Ահավասիկ մեր գյուղացիների ձմեռանոցները:

Ինչ կասկած, վոր ավելի լավ է փեթակները դուրսը
թողնել, քան ձեփած արկանոցներով կտուրների վրա
ցրտին, կամ թոնրատանը՝ ծխին տալ:

Մեղուների ներս գնելը պիտի գերադասել, փորովհետեւ նրանք, ինչպէս ասացինք, անհամեմատ քիչ պաշար են սպառում, քիչ են յենթարկվում տաք ու հովի, ուրեմն քիչ շարժվում, հետևապէս և քիչ ուժ կորցնում:

Բայց մեղուներին ներս գնել կարելի չէ այն դեպքում միայն, յեթե հարմարավոր ձմեռանոց կա:

Մեղուների համար ամենահարմար ձմեռանոցը համարվում է նկուղը, յեթե չոր է և ոգանցք ունի: Մեղուներին կարելի չէ գնել և սովորական սենյակում: Վերտեղ ել գնելու լինենք, անհրաժեշտ է, փոր ձմեռանոցը միշտ ել մաքուր ող ունենա: Ողը մաքուր պահելու համար ձմեռանոցում ողանցքներ պիտի լինեն առաստաղից բացված, կամ խողովակներ՝ պատի միջով անցկացրած:

Ամենակարևոր պայմաններից մեկն այն է, փոր մեղուներն անդորր վիճակում լինեն. ամեն մի թխկոց կամ ուժեղ աղմուկ ձմեռանոցի ներսում, թե զրաի պատերի մոտ, մեղուներին շարժողութեան մեջ են գնում. մեղուներն սկսում են մեղր ուտել, ծանրաբեռնում են աղիքները, և փորովհետեւ հնարավորութեան չունեն մաքրվելու համար դուրս թռչել, ուստի փորվածութեան է առաջ դալիս:

Շատ կարևոր պայման է նաև ձմեռանոցի տաքութեան աստիճանը: Տաքութեանը դերս աստիճանից ցած չպիտի լինի, այսինքն՝ ջուրը չպիտի սառչի և վոչ է 5 աստիճանից բարձր, փորովհետեւ սրանից բարձր աստիճանում մեղուներն սկսում են ջրի մեծ պահանջ՝ զգալ և խիստ անհանգստանալ: Փորվածութեան պատճառներից մեկն էլ այդ է:

Միշտ կարևոր պայմանը՝ ձմեռանոցի կառուցող միջոցներն են:

Ձմեռանոցում անհրաժեշտ է ջերմաչափ ունենալ: Սա եժան գործիք է և կարելի չէ գնել գեղատներում: Գործածութեանը սովորելը նույնպէս հեշտ է:

Յեթե մեղվապահը մի քիչ փորձված աղանջ ունի, նրա խողովութեանը փոխարինում է ջերմաչափին:

Յեթե զուգութեամբ մանենք ձմեռանոց, կամայ փակեք դուռը և լսեք, այնպէս էլ թվա, թե հեռից ջրի թույլ խշշոց է լսվում: Այսպիսի ձայնը նշան է, փոր մեղուների դրութեանը լավ է. իսկ յեթե լսվում է ուժեղ բռնոց և հեռն ել ջուկ-ջուկ ազդողոցներ, կնշանակի՝ կամ շատ ցուրտ է, կամ շատ տաք:

Մեղուների համար ամենից լավ տաքութեանը մոտ 3 աստիճան է Ռեմյուրի ջերմաչափով: Յուրա ժամանակ ողանցքները պիտի փոքրացնել, կամ փակել ժամանակավորապէս, իսկ տաք լինելու դեպքում՝ զիջերը դուռը բաց թողնել: Ողի բարեխառնութեան այսպիսի փոփոխութեաներ անդի յեն ունենում սենյակներում և սրա համար ել նրանք այնքան ել հարմար չեն, ավելի հարմար են ներքնառները, փորտեղ միշտ միատեսակ տաքութեան է լինում:

Փեթակները ձմեռանոցներում գնում են մի քանի շաբաթ, բայց այնպէս, փոր շաբաթի միջով մարդ ազատ շարժվել կարողանա: Շարելու այս ձևն անհարմար եմ համարում այն պատճառով, փոր նեղ անցքերում ողը կանգնում և զրգվարութեամբ է փոխվում, ինչպէս նեղ փողոցներ ունեցող գյուղերում և քաղաքներում:

Փեթակները յես շարում եմ պատերի յերկարութեամբ, մի քանի վերջոկ պատից հեռու. այսպիսով չորս պատն ել ծածկվում են փեթակներով, փորանց արկանոցները դարձած են դեպի սենյակի ներսը: Այսպիսով փեթակների առաջ ստացվում է ընդարձակ ազատ տարածութեան և այս ձևի շարվածքով ողը միշտ մաքուր է մնում:

Յերբ փեթակներն առանց խուփի յենք ներս տանում և սենյակն ել ազատ է, իրար վրա գնում ենք 4-ական հատ, կամ պակտ: Առանց խուփի չի կարելի գնել այն դեպքում, յեթե շրջանակների վրայի քաթանի փոխարեն տախտակներ են դրված: Յեթե շրջանակները տախտակով չեն

ծածկված, պետք է խուփերով ներս գնել, միայն նրանք յերկու ճակատից յերկաթացանցով փակված ողանցքներ պիտի ունենան: Սուփերով ներս գնելու հպատակը մըկ-ներին ազատելն է, փորովհետև փեթակներն առանց խուփերի մնալու դեպքում, մկները ծակում են շորե ծածկոցները և խոշոր ավերածություններ գործում փեթակում:

Մարտ ամսվա ընթացքում, կամ ապրիլի սկզբներին, հայած յեղանակին, մեղուներն կամաց-կամաց զգում են դարնան շունչը և նրանց ձայնն անտիճանաբար բարձրանում է:

Յերը ձմերանոցի տաքությունը 5 աստիճանից բարձրանում է և մեղուներն գլալի կերպով անհանգստանում են, կնշանակի դուրս գնելու օրերը մոտենում են, ուստի պատրաստություն պիտի տեսնել: Իսկ յեթե նրանք հանգիստ հասած են և շարունակվում է հեռավոր ջրվեժի նման անվրդով խշռոցը, շտապելու կարիք չկա, փորքան ուշ դուրս գրվի, այնքան լավ:

Մեղուներին ձմերանոց գնելու ժամանակը կախված յեղանակից: Մեր յերկրում սովորաբար ներս ենք գրնում սկսած հոկտեմբերի վերջերից մինչև նոյեմբերի կեսը, բացառիկ տաք տարիներին՝ ավելի ուշ:

52. ՄԵՂՈՒՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Փորլուծություն

Սա բավական լուրջ հիվանդություն է, փորովհետև չափազանց թուլացնում է ընտանիքին և յերբեմն ել սպանում: Փորլուծություն ունեցող փեթակի պատերը, շրջանակները և հատակը կեղտոտված են լինում մեղուների արտաթորությունով: Պատճառներն են՝ վատ մեղրը, ինչպես որինսկ՝ ծուռերի տերևներից հավաքած մանանան, չսերեկած-շաքարացած մեղրը, մզված ծաղկափոշին և չափազանց շատ ուտելը, վոր, ինչպես ասացինք, հետևանք է անհանգիստ ձմերելու: Այս հիվանդությունից մեղու-

ներն ազատվում են, հենց վոր հնարավորություն են ստանում դուրս թռչելու և մաքրվելու:

Այդպիսի փեթակները դարնանը պիտի լավ մաքրել և փորլուծութամբ կեղտոտված հացերը փոխարինել ուրիշներով:

բ) Վորդերի մահացությունը

Վորդերի մահացությունն առաջ է գալիս մրսելուց կամ քաղցից: Այս հիվանդությունը չպետք է շփոթել փտախտի հետ, արտաքին նշաններով ել շատ փորձակի տարբերվում է փտախտից: Ցրաից կամ քաղցից մեռնում են բոլոր հասակի վորդերը, այնինչ փտախտի ժամանակ այդպես չէ: Բացի դրանից, մահացություն հիվանդությունը ստակած մեղուների դիակները մուգ-կապտագույն են լինում, մահավանդ փորի օղբերի մոտ և նեխված մսի հոտ են ունենում, այս հիվանդությունը վարակիչ չէ:

գ) Փսախս

Փտախտը նոր հիվանդություն չէ, գեռ մեզնից 2000 տարի առաջ փտախտը հայտնի յեր մարդկանց:


Այս հիվանդությունն իսկապես վոշ թե մեղուների, այլ վորդերի հիվանդություն է:

Կա յերեք տեսակ փտախտ՝ փակ վորդի (ամերիկական), բաց վորդի (յեվրոպական) և պարկավորդ: Կա և մի չորրորդ հիվանդություն թթու վորդ անունով, վոր գուցե նույնպես փտախտի մի տեսակն է, բայց առաջինների չափ վատագույնը չէ և յերբեմն ինքն իրեն անցում է: Բշկելիս այս հիվանդությունն ել պիտի վորպես փտախտ նկատել և նույն ձևով բժշկել:

Փտախտի սկզբնական նշանը վորդի ցրվածությունն է, թեև ցրվածությունը կարող է հետևանք լինել նաև մոր ծերություն, կամ արտավորության: Համենայն դեպս ցրված վորդն առաջին նախազգուշությունն է, վոր տըր-

վում է մեղմապահին. այդպիսի փեթակը պիտի նշան ա-
նել և շարունակ հսկել նրա վրա:

Պատահում է և այլ կերպ. լավ և խիտ դրած վորդի
մեջ այստեղ-այնտեղ նկատվում են փառած և ծածկոցները
պատռված բջիջներ: Յերբ փառխուր բավական դարգանում
է, նա շատ բացահայտ է դառնում և անվարժ աչքն էլ
խսկույն նկատում է: Տեղ-տեղ ընկած առողջ վորդերի
արանքներում սերեկները ծակված, բազմաթիվ բջիջներ
են սկսում յերևալ: Այս ծակոտիներն առաջ են գալիս
նրանից, վոր փառվ վորդը զազեր է արձակում, վորոնց
ճնշումից սերեկները պատռվում են: Փառած վորդը բոլո-
րովին հեղուկ է դառնում և սկզբում համարյա հոտ չի
ունենում. բայց յերբ նա բավականաչափ հասնում է,
թանձրանում, մուգ դարչինի գույն է ստանում և ծանր
հոտ արձակում: Այս հոտը յերբեմն հոտած մորթու, յեր-
բեմն էլ յեփած սոսիսների հոտ է հիշեցնում: Յեթե չոփի
ծայրը թաթախենք հեղուկի մեջ և բարձրացնենք, կտես-
նենք, վոր ձգվում թել է տալիս: Ապա հեղհեռե թանձ-
րանալով չորանում է, համարյա սեռնում և կոչում բջի
ներքևի պատին: Այսպես է լինում փակ վորդի փառխուր
պատկերը:



Փակ վորդի փառխուր վարակված հաց

Բաց վորդի, կամ յեփրուպական փառխուր արտաքուստ

վոչնչով նման չէ առաջինին: Վորդերը ստտկում են դեռ
չսերեկած, ուրեմն մինչև 7 որեկան հասակը: Առողջ վոր-
դերն մարդարտագույն են, համարյա սպիտակ և կծկված-
սպառկած են բջիջի հատակին: Այնինչ վարակված վորդն
սկսում է ձգվել բջիջում և սկզբում կեղտոտ դեղնավուն
գույն է ստանում, հետո հոտում և կամաց-կամաց մուգ
գույն է ստանում:

Պարկավորդն նույնպես հոտում է, բայց հոտած հե-
ղուկը գտնվում է պարկի մեջ և ձգված է լինում բջիջի
ներքևի պատն ի վեր, ամբողջ յերկարությամբ: Վորոշ
զգուշությամբ հաջողվում է առանց պարկը պատռելու
ամբողջապես հանել բջիջից:

Թթու վորդն իր արտաքին տեսքով վոչնչով չի տար-
բերվում փակ վորդի փառխուրից: Բայց նրա հեղուկը մոխ-
րագույն է, ջրալի և հոտը քաղախի կամ ավելի շուտ՝
փառած ու քաղախած խնձորի հոտ է հեշեցնում:

Ահա բոլոր չորս տեսակ հիվանդությունների մոտա-
վոր նկարագրությունը:

53. ԻՆՁԻՑ Ե ԱՌԱՋ ԳԱԼԻՍ ՓՏԱԽՏԸ ՅԵՎ ԻՆՁՊԵՍ Ե ՏԱ- ՐԱԾՎՈՒՄ

Ինչպես ամեն մի վարակիչ հիվանդություն, այնպես
ևլ փառխուրն առաջ է գալիս փորրիկ, հասարակ աչքով
անտեսանելի մարմիններից, վոր բացիկ կամ բակտերիա
յե կոչվում: Այս բացիկները առայժմ մեզ անհայտ ազ-
բյուրներից ընկնում են փեթակի, բուն դնում վորդերի
մեջ, մեծ արագությամբ, միլիոններով բազմանում և թու-
նավորելով վորդերին՝ սպանում են նրանց:

Յեթե ժամանակին միջոցներ ձեռք չեն առնվում,
փառխուրն արագությամբ զարգանում է, ընտանիքն սո-
սիճանաբար թուլանում և ի վերջո հանգչում:

Ընտանիքի թուլանալու և ապա հանգչելու պատճառն
այն է, վոր մեղուները թե բնական մահով և թե զանա-
զան արտաքին պատճառներից հետզհետե ստտկում, վեր-

ջանում են, իսկ նրանց տեղը նոր սերունդ չի գտնիս, փորձհեռն փորձի մեծ մասը փոխանակ մեղու դառնալու, փառում, վոջնջանում և:

Հիվանդ ընտանիքը բացի նրանից, վոր ինքն է վոջնջանում, գանազան ձևերով վարակում է նաև հարեան ընտանիքներին և այդպիսով, յեթե հիվանդությունը չենք վերացնում, շատ ծանր ու սպառնալի կերպարանք է ստանում: Շատ հաճախ է պատահել, վոր ամբողջ մեղվանոցներ են դոճ գնացել այս հիվանդության:

Փտախտի ամենամեծ տարածողներն ամենից առաջ իրենք մեղվապահներն են, շնորհիվ իրենց տգիտության կամ անհոգության:

Նրանք խառնում են շրջանակները վարակված փեթակի վրա աշխատելուց հետո առանց ձեռներն ու գործիքները մաքրելու-ախտահանելու, անցնում են առողջ փեթակին և վարակում նրան: Հիվանդ փեթակի մասերը-շրջանակները, չեչը չեն պահում այնպես, վոր մեղուները նրանց չհասնեն և կրծած մամուլ ու ակնամոմով վարակեն իրենց բները:

Հիվանդությունը տարածվում է նաև մեղունների միջոցով. հիվանդությունից թուլացած փեթակը սովորաբար թալանվում է ուժեղ ընտանիքների կողմից և ուրեմն՝ մեղունների միջոցով վարակը հիվանդներից անցնում է առողջներին:

Վարակման գործում մեծ դեր է խաղում և քամին: Չորացած փտախտի նյութը մեղունները կրծում-դուրս են ածում. քամին փոշու հետ միասին այդ նյութի մասնիկները բարձրացնում է ողի մեջ և տալով մյուս փեթակների արկանոցներին, վարակում է նրանց:

Գուցե կան և մեղ անհայտ ճանապարհներ, վորոնց միջոցով վարակվում են մեղունները: Առայժմ մեղ հայտնի պատճառները սրանք են, ինչ վոր թվեցինք:

Այս բոլորից պարզ է, վոր առաջին՝ հիվանդ փեթակի հետ կապ ունեցող բոլոր բաները— շրջանակ, չեչ, դա-

դարկված փեթակը, պետք է այնպիսի տեղ պահել, վոր մեղունները նրանց հասնել չկարողանան (իր տեղում կռնեմ, թե սրանց հետ ինչպես պիտի վարվել). յերկրորդ՝ հիվանդ փեթակից յերեք շրջանակ չպիտի գնել առողջի մեջ. յերրորդ՝ փեթակի հետ գործ ունենալուց հետո, գործիքներն ու ձեռներն անպատճառ պիտի ախտահանել (տես 55-րդ գլուխը) և յորրորդ՝ հիվանդ փեթակը չհասցնել այն գրության, վոր նրան թալանեն:

54. ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿՌՎԵԼ ՓՏԱԽՏԻ ԴԵՍ

Ամեն հիվանդություն տարածվելի յե, յերբ նրա դեմ ժամանակին միջոցներ ձեռք չենք առնվում և ամեն հիվանդություն շատ անգոր է դառնում, յերբ նրա դեմ անխնա կռիվ է մղվում: Այդպես է և փտախտը: Յեթե այդ հիվանդությունն աչքաթող անենք, նա վաղ թե ուշ մեր մեղանոցը կկործանի, իսկ յերբ մենք նրան ճանաչում ենք և նրա դեմ կռվելու միջոցները գիտենք, ճիշտ է, նա մեր մեղվանոցից ձեռք չի քաշի, բայց այնքան կթուլանա, վոր մենք նրանից շատ ել չենք վախենա և և մեր մեղվանոցը կշարունակի կանոնավոր արդյունք տալ:

Փտախտը բժշկելու հիմնական դեղը դեռևս չկա. մի միջոց միայն ունենք—հիվանդ մեղունների փոխադրությունը նոր փեթակ, նոր չեչերի վրա: Այս ձևով 10-ը հիվանդներից 7-ը, 8-ը, 9-ը բժկկվում են, յեթե, իհարկե, փոխադրությունը կատարվում է խնամքով և մաքուր: Հետևապես բժշկության այս ձևը բավականին նպատակահարմար պիտի համարել:

Թվինք, թե մեղվանոցում փտախտի ինչպիսի գեպքեր կարող են լինել և ամեն մի գեպքում, ինչպես պիտի վարվել:

ա) Յերբ մեղվանոցում առաջին անգամն է փտախտ յերևում և շրջանումն ել փտախտ չկա, այս դեպքում լավագույն միջոցն է անմիջապես հիվանդ փեթակն ամբողջովին այրել:

բ) Յերբ հիվանդութիւնն կա շրջանում, բայց մեղ-
վանոցն ախտան հետու և ստանձնացած է, վոր շրջանի
մյուս մեղվանոցներէն չի կարող վարակիլ և վարակին
ընկել և պատահաբար, այս գեպքումն ել այրելն ամենա-
կարուկ միջոցն է.

գ) Յերբ հիվանդութիւնը յերևում է ախտի մեղ-
վանոցում, վորի հարեան բոլոր մեղվանոցները վարակ-
ված են այդ հիվանդութեամբ — այրելը միտք չունի: Յեթե
մեկ ընտանիք է հիվանդ և մայրը ջահիլ է, կարելի չկա
մարն սպանել և 21 որ սպանել, մինչև որ մայրն ու
վորդերը դուրս յեկած կլինեն, ինչպէս անում են սովո-
րաբար: Այս գեպքում պիտի անմիջապէս կատարել փո-
խադրութիւն: 21 որ փառած վորդը թողնել մեղվանոցում,
այնքան էլ ցանկալի և նպատակահարմար չէ:

Կարծիք կա, վոր մայրերի ձվարաններն ել կարող են
վարակված լինել. բայց մի շարք փորձեր ասացուցել են,
վոր մայրերն առհասարակ վարակը չեն անցկացնում նոր
փեթակի մեջ: Կասկածելի չեն միայն բայց վորդի փոխա-
տով բռնված ընտանիքների մայրերը, սրանց պիտի սպա-
նել:

Փոխադրութիւնը պիտի կատարել հետեյալ ձևով.
հիվանդ փեթակի տեղը դնում են մի դատարկ փեթակ
մի յերկու դադարկ շրջանակով: Մեկ-մեկ հանում են հի-
վանդի շրջանակները և խողանակով մեղուններին թափում
դատարկ փեթակի առաջ փռած ստվանի վրա: Այդ ժա-
մանակ հարեան փեթակները արկանոցները պիտի փակել,
վորովհետեւ պատահում է, վոր շփոթված մեղունները մըա-
նում են հարեանների բները: Դատարկված փեթակն իր
շրջանակներով տանում են ներս, ստվանն զգուշութեամբ
հափաքում են, վորպեսպի նրա վրա թափված մեղրի կա-
թիլները, մոմի կտորները, փոշին գետին չթափվեն:

Այս գործողութիւնը պիտի կատարել յերեկոյան,
յերբ մեղուններն արգեն ներս են հափաքվել:

Սորհուրդ էն տալիս հիվանդ ընտանիքը թափ տա-
լուց հետո, յերեք որ պահել հով և մութ տեղում:

Յեա գերադասում եմ թողնել տեղն ու տեղը, վո-
րովհետեւ մեղունները դուրս ու ներս են անում, յենթարկ-
վում են արևի ճառագայթներին, մոմ են արտադրում,
նոր հացեր են շինում և այս բոլոր գործողութիւններից
հետո, իմ կարծիքով, մաքրվում են: Վաղուց է, վոր յեա
փոխադրութիւնն այս ձևով եմ կատարում և չեմ նկատել,
վոր սա վատ լինի:

Այսպէս ուրեմն՝ հիվանդ ընտանիքն իր նոր բնում
աշխատում է անարգել, նոր հացերի հիմք է դնում և նոր
բուն սարքում:

Յերբորդ որվա յերեկոյան մի արիշ փեթակ մոմա-
թերթած շրջանակներով դնում են սրա տեղը, փռուէ սա-
վանը (նորը, իսկ յեթե հին է՝ լվացված — արտահանված) և
մեղուններին նորից թափ տալիս. սրանով վերջանում է
փոխադրութեան գործողութիւնը:

դ) Յերբ մեղվանոցում կան մեկից ավելի հիվանդ-
ներ, այս գեպքում լավագուշն մայրերով ընտանիքները
փոխադրում են վերին կարագրված ձևով, իսկ սրանց վորդով
հացերը տալիս են մյուս հիվանդին կամ հիվանդներին.
լեցնում են սրանց բները յեթե տեղ ունեն, իսկ մնացած
հացերը դատարկում են զլիւին, յերկու միմիանց վրա
դրած վերնահարկերի մեջ: Այս ընտանիքների մայրերը
պիտի սպանել և 21 որից հետո նույն ձևով փոխադրու-
թիւն կատարել: Այսպիսի ընտանիքները շատ ուժեղ են
լինում և յերբեմն ձագ ել են տալիս. ավելի լավ բնական
փոխադրութիւնն է կատարվում:

Յեթե հիվանդ ընտանիքները բավականաչափ ուժեղ
են և անողջ վորդ շատ ունեն և ուրեմն 21 որից հետո
բավական թվով մեղուններ կունենան, դոնե միջակ ընտա-
նիք կազմելու համար, այս գեպքում, կարելի չէ սպանել
բոլորի մայրերին և փոխադրութիւնը կատարել 21 որից
հետո:

Հիմանգ փեթակների փոխադրությունն սկսում ենք այն ժամանակ, յերբ մեղուներն արդեն մոմ են դուրս քաշում. ավելի վաղ միտք չունի փոխադրել, վորովհետև ավամ մոմաթերթերից նրանք նոր բուն պիտի սարքեն, իսկ այս բանը նրանք վաղ պարնանն անել չեն կարող:

յ) Յերբ հիմանգությունը նկատում ենք ուժեղ փեթակում բերքի սկզբին և հիմանգության նշանները դեռևս թույլ են: այդպիսի փեթակի բերքից չպիտի զրկվել: Հիմանգությունը նկատելուն պես սպանել մորը և փոխադրությունը կատարել բերքից հետո ինչպես ասված է գ. կետում:

զ) Հաճախ ե պատահում, վոր նոր հիմանգներին մենք ուշ ենք նկատում, որինալ գլխավոր բերքի վերջերին, այսինքն այնպիսի ժամանակ, յերբ նրանք այլևս չեն կարող ավամ նոր բունը սարքել և ձմեպա պաշար հավաքել: Այդպիսիների փոխադրությունը պիտի կատարել աշնանը, ուղղակի նստեցնելով առողջ փեթակներից վերցրած մեղրի վրա:

Այս դեպքումն էլ պիտի կատարել այն բոլորը, ինչ ասված է յերեւում, այն տարբերությամբ միայն, վոր նրանց հենց սկզբից պիտի սալ մեղրը, այլապես դատարկ փեթակից նրանք կարող են փախչել: Այս ձևի փոխադրությունը նույնպես լավ հետեանքներ է տալիս:

Վերը հիշած բոլոր միջոցների հետ զմանք միացնում են նաև ֆորմալինի գործադրությունը: Ֆորմալինի գործածության համար կա մի հատուկ գործիք, վոր Արխիպենկոյի լասպ և կոչվում: Սրա մեջ լեցնում են $2\frac{1}{2}\%$ -անոց ֆորմալին *), և յերբ սկսում է յեռալ և գոլորշի արձակել, լամպի խողովակը մացնում են հիմանգ փեթակի արկանոցին և պահում մինչև 15-ը համարելը: Այն ընտանիքներին, վորոնց մայրերին սպանել ենք, պիտի գո-

*) $2\frac{1}{2}\%$ ֆորմալին ստանալու համար դեղատնից գնած ֆորմալինի (40%) ամեն մի բաժակին պիտի ավելացնել մի բաժակ ջուր:

լորշի սալ 21 օր, այսինքն մինչև փոխադրությունը և մի քանի օր էլ փոխադրությունից հետո. իսկ վորոնք փոխադրված են անմիջապես առանց մայրերն սպանելու, բավական է մի շաբաթ: Գոլորշի պիտի սալ յերեկոյան, յերբ բոլոր մեղուները տուն են հավաքված:

Գոլորշի տալու հետ միասին մեղուներին պիտի կերակրել շաքարաջրով, վորի ամեն մի բաժակին պիտի խառնել 5-6 կաթիլ նույն 0% -անոց ֆորմալինից:

Պետք է ասել, վոր ֆորմալինով և առանց ֆորմալինի բժշկած ընտանիքների մեջ տարբերություն չի նկատվում և ֆորմալինը դուրս է ընկնում գործածությունից:

Ով հարմարություն և ժամանակ ունի՝ թող անի:

55. ԻՆՋՊԵՍ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵԼ ԱՆՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փոխադրության նպատակներից մեկն՝ ընտանիքին առողջացնելն է: Սակայն պիտավոր նպատակն այն է, վոր մենք մեղվանոցից հեռացնենք վոնչնացնենք և մարբենք այն բոլորը, ինչ վոր կապ է ունեցել հիվանդ ընտանիքի հետ և առողջ ընտանիքների համար կարող է վարակման աղբյուր դառնալ: Պարզ է, ուրեմն, վոր հիվանդ ընտանիքների փեթակները, շրջանակները, մոմը և ծածկոցները պիտի պահենք այնպիսի տեղ, վոր վոչ մի մեղու չըկարողանա նրանց հասնել: Այս բոլորը յերկար պահել չի կարելի. անմիջապես պիտի կատարել, ինչ վոր հարկավոր է:

Մաքուր քերել փեթակի պատերին կալած մոմը և ակնամոմը, ջարդել հացերը, շրջանակները մաքուր քերել, շրջանակներն ու ծածկոցներն այրել, մոմը ջրով մոտ յերկու ժամ յեփել, փեթակն ավտահանել:

Ախտահանության զանազան ձևեր կան. ում ինչպես հարմար է, այնպես էլ թող կատարի:

Սե թիթեղից շինած հատուկ կախանների մեջ փե-

Թափները յեփել յերկու ժամ: Այդպիսի կաթսաների մեջ տեղափոխվում են յերկու փեթակ իրենց բոլոր մասերով: Ով այդպիսի կաթսա ունի՝ շրջանակները և ծածկոցները կարող է չայրել:

Կարելի չէ փեթակը խանձել, լինի լամպով (лампа), սա ուժեղ բոց ունի և ախտահանությունն և՛ ժան և նստում: Այս միջոցը շատ հարմար է վառելափայտով աղքատ տեղերում: Բոցին պիտի յենթարկել թե ներսի և թե դրսի պատելը: Բոցը յերկար պահել անելուհներում, խոտոցներում, առանձին ուշադրությամբ պետք է ախտահանել հատակը:

Ով այս հարմարությունները չունի, կարող է ողորդել թանիրի բոցից, միայն թե փեթակի բոլոր մասերն այնպես պիտի պահել, վոր բոցն ամեն տեղ տանի:

Դանակը, բերիչը, խոզանակը և առհասարակ այն բոլորը, ինչով աշխատել են հիվանդ ընտանիքի վրա, պիտի յեփել կամ լվանալ սուլեմայի լուծույթով (1:1000-ի): Բժշկի թույլտվությամբ այդ լուծույթը կարելի չէ սառնալ գեղաանից: Ձեռները նույնպես պիտի լվանալ սուլեմայով:

Հիվանդ փեթակների առջև և կողքերին՝ գետնի վրա չհանդած կիր շաղ տալ, իսկ յեթե կիր չկա՝ գոնե մոխիր թափել:

56. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՆԸ

Թող դարձանալի չլի՛վա, յեթե ասենք, վոր մեղուների ամենավտանգավոր թշնամին ինքը մեղվապահն է: Մեղվապահի ազիտության, անհոգության և հաճախ ազահության պատճառով մեղվի հարյուրավոր ընտանիքներ են վոջնչանում: Մեր ազիտության և անհոգության պատճառով բազմաթիվ մեղուներ զոհ ենք տալիս հիվանդություններին, մեր ազահության զոհ են գնում բազմաթիվ մեղուներ, վարսվհառե աշնանը նրանց այնպես ենք թալանում, վոր դարուն ել չեն կարողանում համել:

Մեղուների թշնամիների թվին են պատկանում բազմատեսակ թռչուններ և զլխավորապես մի գեղեցիկ թռչուն, վորին մեր գյուղացիք «ճանճակուլ» (мурга) են ասում: Յերբ սարերը մառախուղով պատած են լինում, այս թռչուններն անագին յերամներով (հավանորեն սարերում կեր չգտնելու պատճառով) իջնում են սարերից և հարձակվում մեղվանոցների վրա: Մեղուներին ճարպիտ ենք բռնում են սղում, հուպ տալիս կտուցի ծայրին և կուլ տալիս: Սպանված ճանճակուլի քուչից (փուչիկից) հանել են 150 մեղվից ավելի: Սրանց գեմ պիտի կովել վորսորդական հրացանով:

ՅԵՅԸ բուն է դնում անմաքուր պահած և թույլ փեթակներում, մոմն ուտում և անցքեր է շինում հացերի մեջ: Ուտում, փչացնում է նաև հավաքած այն չեչերը վորոնք յերկար ժամանակ մնում են առանց հալելու:

ՄՈՒԿԸ մեծ փառ է տալիս ձմերանոցում, յեթե նրան հաջողվում է փեթակ մտնել: Փեթակ մտնում է կամ չափից ավելի բարձրություն ունեցող արկանոցով, կամ վերելի ծածկոցը ծակելով: Մկներն ուտում են մեղրը, ջարդում են հացերը, պատահում է, վոր ընտանիք են հանգցնում:

ՄԵՂՎԻ ՎՈՋԻԸ վորքիկ շեկ դույնի միջատ է, այդ միջատները փեթակ են տեղափոխվում դաշտից՝ մեղուների հետ, նրանք սիրում են մոր վրա հավաքվել, յերբեմն այնքան շատ են լինում, վոր մայրը դժվարությամբ է շարժվում: Այսպիսի դեպքերում զգուշությամբ մորը թևերից, կամ կրծքից պիտի բռնել և փոքրիկ, փափուկ խոզանակով կամ փետուրով վրայից թափել վոջիկները: Ծիախտի ծխից վոջիկներն անմիջապես թափվում են մոր վրայից, բայց այս ձևը մի քիչ վտանգավոր է, վորովհետև մեղուները յերբեմն սպանում են ոտար հոտ ստացած մորը: Խորհուրդ են տալիս նաև մորը մեղրոտել:

57. ՄԵՂՈՒՆԵՐԻ ԴԵՐԸ ԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՂՄՆԱՎՈՍՐԱՆ ՍԵՋ

Մեր հասարակության, մանավանդ գյուղացիության մեջ տարածված այն սխալ կարծիքը, թե մեղուները վնասում են պտղատու ծառերին և հացաբույսերին, ծծելով նրանց հյութը ծաղկման շրջանում — առիթ է առիթ ինձ, հնարավորության սահմաններում, լուսաբանել այս խնդիրը և ցրել այդ միանգամայն անհիմն նախապաշարմունքը։ Այսպիսի լուսաբանությունն անհրաժեշտ է առանձնապես այն պատճառով, վոր այս հողի վրա յերբեմն թյուրիմացություններ են առաջանում գյուղացիների և մեղվապահների միջև։

Մինչև այժմ շատ-շատերը դեռևս չեն հասկանում, վոր մեղվի գոյության նշանակությունը վոչ միայն մարդուն մեղր հայթայթելու, այլև մի ուրիշ, այն էլ շատ ավելի կարևոր նշանակություն մեջ է, այն է՝ ծաղիկները բեղմնավորելու, վորպեսզի նրանք կարողանան պտուղ ու սերմ տալ։

Մեր բույսերի մեծագույն մասը մշտապես կարոտ են մեղուների, կամ այլ միջատների այցելության։ Սրանք են, վոր ծաղկից-ծաղիկ թռչելով և ծաղկափոշին փոխադրելով՝ բեղմնավորում են բույսերին։

Իհարկե բույսերի շահը չէ, վոր հարկադրում է մեղուներին այցելել ծաղիկներին։ մեղուն ինքը չափազանց շահագրգռված է այդ բանով։ Ծաղկափոշին նրան անհրաժեշտ է խույս (խաշիլ) պատրաստելու՝ իր վորդերին կերակրելու համար։ Ծաղկափոշու պակասությունն առաջացնում է մեղվի բնտանիքի զարգացման դանդաղում և թուլացում, այս մասին մենք արդեն խոսել ենք։

Մեղր կամ ծաղկափոշի հավաքելիս, մեղուները ծաղկափոշու հատիկների հետ, մանում են շփման մեջ, վորոնք կաշու մեջ մեղվի մարմինը ծածկող մազերին և այս ձևով անցնում ծաղկից-ծաղիկ։

Բույսերի, ծաղիկների սեռական որգանները շատ նը-

ման են կենդանիների սեռական որգաններին և նրանց բեղմնավորումն անհրաժեշտ է պտուղ և սերմ ստանալու համար։ Բույսերի մի քանի տեսակների արական և իգական որգանները տեղավորված են լինում միևնույն ծաղկի մեջ, այնինչ մի ուրիշինը՝ արական ծաղիկները նույն բույսի վրա տեղավորված են իգականից ջուկ և յերբորդ տեսակի ծաղիկների ամեն մի սեռ գտնվում է նույն տեսակի առանձին բույսի վրա։ Բոլոր դեպքերում անհրաժեշտ է, վոր արական ծաղկափոշու հատիկներն ընկնեն իգական վարսանդի բերանը, վորտեղից նրանք մտնում են ծաղկի սաղմարանը և առաջացնում են բեմնավորում և այսպիսով կազմում պտուղը և սերմը։

Առանց փոշեվորման ծաղիկների բեղմնավորումն անհնարին է և ամուլ (ստերջ, դսրը) մնացած ծաղիկն անխուսափելիորեն պիտի թառամի և վոչնչանա առանց պտուղ տալու։

Հեղինակավոր բնագետներ շատ վաղուց գտել և հաստատել են մեղուների հսկայական դերը բուսականության համար։

Վորպես ծաղկափոշի տարածողներ, մեղուները բոլոր միջատներից ամենազնահատելին են, վորովհետև նրանք միաժամանակ ավելի մեծ թվով են յերևում բնության մեջ և այն էլ վաղ գարնան, յերբ ուրիշ միջատներ դեռևս չկան։

Այն հանգամանքը, վոր մեղուները ծաղկափոշի յեն հավաքում, վոր նրանք մեծաքանակ են և ուրեմն այցելում են ծաղիկների անապին քանակություն ընդարձակ տարածությունների վրա, վոր այդ գործը կատարում են ամենամեծ խնամքով, բաց չթողնելով վոչ մի ծաղիկ, նրանց դարձնում են մարդու ամենաողտակար բարեկամը։

Պնդում եմ, վոր մեղուների աված ոգուտը բույսերին անհամեմատ ավելի մեծ արժեք ունի, քան նրանց տված մեղրը։

Բնականաբար հարց է առաջ գալիս, թե ինչպես են

բեղմնավորվում, թեկուզ ասենք, ծառերի ծակիկներն այն վայրերում, վորտեղ մեղուներ չկան: Այդ գործը կատարում է քամին: Մակայն քամին միշտ հուսալի չէ: Խոսենք որինակներով:

Յերբ յեղանակն անձրեային է և ծաղկափռին խոնավանում է և դառնում կպչուն ու քամու միջոցով դժվարությամբ է տեղափոխվում, այս դեպքում մեղուների այցելութունը դառնում է շատ կարևոր հանգամանք: Պարզ է նույնպես, վոր յեթե միենույն տեսակի բույսերը առանձնացած են, կամ դանդում են զգալի հեռավորության վրա և քամին հնարավորություն չունի ծաղիկից-ծաղիկ հասցնելու փռչին, այս դեպքում ևս ոգնության են հասնում մեղուներն ու յյուս միջատները:

Դիտողությունները ցույց են տալիս, վոր միջատների բացակայության դեպքում ծառի այն յերեսը, վորի կողմից փչել է քամին, քիչ է պտղաբերել, այնինչ հակառակ կողմը, վորի վրա քամին լցրել է փռչին, պտղաբերել է առատ: Այս յերևույթը տեղի չեր ունենա, յեթե բեղմնավորմանն ոգնած լինեյին մեղուները, այսինքն՝ ծառն ամբողջովին լավ կպտղաբերի: Մի շարք խնամքով կատարված փորձերն անկասկածելիորեն ապացուցել են, վոր մեղվի մասնակցությունը փռչնորման գործում վոչ միայն եյական է, այլ և զրախանապես անհրաժեշտ՝ բավական բերքն ապահովելու համար:

Բնագետներից մեծագույնը—Դարվինը, իր ժամանակին ցույց է տվել մեղվի նշանակութունը բույսերի համար, վորպես կարևոր միջնորդի. «չկա մեղու՝ չկա սերմ, չկա սերմ՝ չկա ծաղիկների տարածում. վորքան շատ սերմ ծաղիկներից, այնքան ատ ծաղիկ սերմերից», ասում է նա:

Այս բանը նա հաստատեց կանոնավորապես կատարած փորձերով, վոր նրանից հետո շատերը կրկնեցին:

Իր փորձերից մեկի ժամանակ նա հետևյալ արդյունքն ստացավ. սպիտակ յերեքնուկի 20 գլուխը, վորոնց այցելում էյին մեղուները, տվին 2990 հատ սերմ, այն-

ինչ մյուս 20 գլուխը, վոր արհեստականորեն պաշտպանված էյին մեղուներից, չտվին վոչ մի հատիկ սերմ: Նման փորձեր նույն արդյունքով կատարվեցին մորու և այլ պտուղների հետ:

Պտղատու ծառերը, վորոնց մի մասը ծածկված էր ցանցով, վոր արգելք էր հանդիսանում մեղուներին մոտենալ, առատ պտուղ տվին չպաշտպանված մասի վրա, և ընդհակառակն, ցանցով ծածկված մասը կամ խալառ անպտուղ մնաց, կամ տվեց շատ քիչ պտուղ, այն էլ վատ հատիկության:

Յերկրագնդի զանազան մասերում տարածված են վայրի մեղուների մոտավորապես 4500 տեսակ, վորոնք անշուշտ նույն գերն են կատարում բույսերի վերաբերմամբ, ինչ ընտանի մեղուները:

Բնագետների կարծիքով 100.000 տեսակի բույս կը փռչնանային յերկրի յերեսից, յեթե չլինեյին մեղուները: Մեղվապահ Մորիս Մետերլինկը իր «Մեղուն և նրա կյանքը» գեղեցիկ աշխատության մեջ, խոսելով մեր մեղվի նախամոր մասին, վոր տարածված է գրեթե ամբողջ յերկրագնդի յերեսին, ասում է.—

«Նայելով նրան, մեր մտքովն անգամ չի անցնում, վոր մենք հավանորեն մեր ծաղիկների և պտուղների մեծագույն մասով պարտական ենք նրան, և ով գիտե, գուցե, պարտական ենք նաև մեր քաղաքակրթությամբ»:

Կուլտուրական յերկրներում՝ որինակ Ամերիկայում, ամեն մի գյուղացի կարծես սրբազան պարտականութուն է համարում իր անտեսության մեջ ունենալ մի քանի տոանյակ փեթակ, վորոնք տալիս են նրան սննդի համար այնքան կարևոր լավագույն շաքարը—մեղրը, թանկարժեք մոմը և բացի զրանից, ապահովում են նրա այգու և բանջարանոցի բերքը:

Ամերիկայի խոշոր այգետերերը, ծառերի ծաղկման շրջանում, մեծ մեղվանոցներ են վարձում իրենց այգում դնելու հարար և ամեն մի փեթակին 6 դոլար (12 ռուբլի)

վարձ են տալիս: Պարզ է, վոր գործնական ամերիկացին աշտպիտի ծախս չեր անի, յեթե զրա մեջ ոգուտ չտեսներ:

Ահա թե վորքան մեծ է այն փոքրիկ միջատի դերը մեր կյանքում, վոր մատնված է անհասկանալի անտարբերության, յերբեմն նաեւ անմիտ հալածանքի մեր գյուղացիության կողմից:

58. ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍԷ ԳՅՈՒՂԱՑԻ ՄԵՂՎԱՊԱՆՆԵՐԻՆ

Մեր գյուղացի մեղվապահներն այն սխալ կարծիքն ունեն, թե մեզր ավորը շրջանակավոր փեթակն է: Նրանք կարծում են, թե բավական է մեղուն զնեւ արկղի մեջ և մեղրն ինքն իրեն կհոսի: Այս կարծիքը սխալ է իհարկե: Յեթե մեղրն ինքն իրեն հոսելու լիներ, ուրեմն քթոցից ել կհոսեր, ել ինչո՞ւ եյինք նեղություն քաշում, ծախս անում արկղի համար: Մեղուներին քթոցից արկղ ենք փոխադրում նրա համար, վոր հնարավորություն ստանանք անելու այն, ինչ վոր պետք է շատ մեղր ստանալու համար. իսկ յեթե արկղն ել պիտի այնպես անխնամ թողնենք, ինչպես քթոցը, ապա միանգամայն ավելորդ է մեղուն տեղափոխել արկղի մեջ, վորովհետեւ գործը չհասկացող մեղվապահը քթոցից ելի մի բան կստանա, իսկ արկղը նրա գլխին խաթա-բալա կդառնա և մշտական անողուտ ծախսերի պատճառ: Այս ել կա. մեր գյուղացի մեղվապահներից շատ քչերն են ոգտվում մեղու պահելուց:

Սրա պատճառները մի քանիսն են:

Ամենից առաջ մեր գյուղացին բոլորովին ծանոթ չէ արկղում մեղու պահելու ձևերին, և այդ բանի համար անհրաժեշտ գիտելիքները չի իմանում: Յերկրորդ՝ նա մեղուներով զբաղվում է ի միջի աշրոց, հենց այնպես. «մի բան կտան լավ, չեն տա՝ ո՞վ ինչ անի»: անցնում է մի քանի տարի և նա արգեն մեղվից զրկվում է և դատարկ փեթակները լեցնում չարգախը, կամ շարում է աթարի

դեղերի կողքին, կամ թե նրա կինը լոբի ու ձաւար է լեցնում մեջը: Յերբ հարց եք տալիս, թե՝ «ես վննց ելավ, յաշիկն ել մի գատ չի» — պատասխանում ենա: Այսպես է վերջանում մեր գյուղացու մեղվապահությունը:

Այնպես ել է պատահում, վոր գյուղացին շատ լավ է հասկանում մեղվապահության սղուտը, շատ ել սրտով ուզում է վոր գործն առաջ տանի, զարգացնի, բայց համ գիտությունն է պակաս, համ ել նրա մյուս աշխատանքներն են խանգարում: Գարունը բացվեց՝ վար ու ցանք, հետո խոտի, արտի հունձ, կալ... և ժամանակն անցնում է:

Ապա ի՞նչ պիտի անեք: Խո չենք թողնելու, վոր մեր ծաղկավետ յերկրի հարյուր հազարավոր փթերով մեղրը զուր կորչի: Իհարկե չէ. այդ մեղրը պիտի հավաքենք: Ի՞նչպես:

Պիտի համախմվենք, պիտի միանանք: Միության միջոցով է ամեն գործ առաջ գնում, միության միջոցով ել մեղվապահությունն առաջ կգնա:

Մի կողմը թողնենք գիտուն ու խոշոր մեղվապահներն. նրանք իրենց գործը տանում են:

Ի՞նչ պիտի անեն 5, 10, 20 փեթակ ունեցողները, վորոնք իրենց անտեսությունը վոչ տանել զիտեն և վոչ ել ժամանակ ունեն:

Այդպիսիները պիտի միանան՝ արտել կազմեն:

Ի՞նչ առավելություն ունի արտելը:

Նախ այն, վոր մի գործով փոխանակ 10—20 մարդ զբաղվելու, կզբաղվի մեկը, վոր ուձկով կամ վոր և է այլ պայմանով հանձն կառնի խնամել արտելի մեղվանոցը:

Յերկրորդ՝ միացած մեղվանոցի ծախսերը կքշանան, վորովհետեւ ընդհանուր ուժերով ձեռք կբերվեն անհրաժեշտ գործիքներ. իսկ առանձին մեղվանոցները այդ ծախսը պիտի անեյին ջոկ-ջոկ, կամ մնային առանց գործիքների:

Յերրորդ՝ մեղվանոցի խնամքն անհամեմատ կլավանա, վորովհետեւ մի հատուկ մարդ շարունակ նրա գլխին կլինի:

Չորրորդ՝ շատ կենդանա հիվանդների՝ բժշկության գործը. նախ՝ մի հոգի կկատարի այս գործը, փոխանակ 10-ի, 20-ի և ապա՝ այդ մի հոգին պահանջվող համալիրությունը կունենա, ուրեմն բժշկությունը լավ կկատարի:

Հինգերորդ՝ չափազանց կարագանա և կենդանա մեղվանոցը մեծացնելու գործը, նախ այն պատճառով, վոր միանալը հենց ուժ է, վոր կա և կհարկադրի անդամներին կատարել մեղվապահի պահանջները և ապա վարկային հիմնարկությունները մեծ չափով ոգնում են արտելներին գործն առաջ տանելու համար, այնինչ մասնավոր անհատներն այս արտոնությունը չունեն:

և Վեցերորդ՝ մեղր ծախելու հարցը կկազմեկերպվի և միշտ ավելի լավ պնով կծախվի կոոպերատիվներին և պետական այլ հիմնարկություններին: Այնինչ այս դրությամբ, փոքր մեղվապահները միշտ ընկնում են չարչիների ձեռքը և ապրանքը կիսապնի կորցնում:

Այսպիսի արտելները վորպես մի միավոր պիտի մըտնեն կոոպերացիայի — մեղվապահական ընկերությունների մեջ:

Ահա մեր փոքր մեղվապահների առաջ պնալու ուղիղ և կարճ ճանապարհը:



Յ Ա Ն Կ

	Եջ.
Առաջարան	3
1. Մեղվի ընտանիքը	5
2. Մայր	»
3. Բանվոր մեղու	9
4. Բուռ	12
5. Մոմեղեն կառուցվածքներ	14
6. Մեղր	»
7. Ծաղկափոշի	15
8. Ակնամոմ	»
9. Զուր	16
10. Մեղվանոցի տեղի ընտրությունը յեվ փեթակների դասավորությունը	»
11. Քթոց յեվ շրջանակավոր փեթակ	17
12. Ի՞նչպես փոխադրել մեղվի ընտանիքը քթոցից շրջանակավոր փեթակի մեջ	19
13. Մեղվապահական գործիքներ	23
14. Ի՞նչ պայմաններ են պետք, վոր մեղվի ընտանիքը կանոնավոր յեվ արագ զարգանա	28
15. Մեղուներին դուրս դնելը	29
16. Հատակները մարրելը	30
17. Թռուցիկ գննություն	31
18. Հիմնական զննություն	»
19. Մեղվապահի որագիրը	32
20. Անկանոն յեվ հնացած չեղերի փոխելը	»
21. Պաշարի լրացումը	33
22. Շրջանակների միջի տարածությունը	34
23. Մեղուների գողությունը յեվ նրա առաջն առնելու միջոցները	»
24. Անմայր ընտանիքներին մայր տալը	36
25. Անմայր ընտանիքների միացումը	38
26. Թույլ ընտանիքների խնամքը	39
27. Վորքան հաճախ պետք է բանալ փեթակները	40
28. Գարնան առաջին բերքը	»
29. Բների ատոմանական լայնացումը	41
30. Վորդի արագ զարգացումը յեվ մորը ձու դնելու տեղ տալը	»

31. Արհեստական կերպով մայրեր հանելը	42
32. Ի՞նչպես պետք է մայրաբջիճն ընտանիքին տալ	43
33. Ի՞նչպես կազմել նուկեռուսներ պահեստի մայրերի համար	44
34. Ի՞նչպես մայր տալ բոռածու մեղուներով ընտանիքին	45

35. Կորի պարանոցի ամսագիր սկզբում	46
36. Եանագիտական կերպերով	47
37. Արհեստական մայր	48
38. Բնական մայր	49
39. Ցեղերի մայր	50
40. Զագ տալու տեղը	51
41. Գործի մայր	52
42. Գործի մայր	53
43. Գործի մայր	54
44. Գործի մայր	55
45. Գործի մայր	56
46. Գործի մայր	57
47. Գործի մայր	58
48. Գործի մայր	59
49. Գործի մայր	60
50. Գործի մայր	61
51. Գործի մայր	62
52. Գործի մայր	63
53. Գործի մայր	64
54. Գործի մայր	65
55. Գործի մայր	66
56. Գործի մայր	67
57. Գործի մայր	68
58. Գործի մայր	69
59. Գործի մայր	70
60. Գործի մայր	71
61. Գործի մայր	72
62. Գործի մայր	73
63. Գործի մայր	74
64. Գործի մայր	75
65. Գործի մայր	76
66. Գործի մայր	77
67. Գործի մայր	78
68. Գործի մայր	79
69. Գործի մայր	80
70. Գործի մայր	81
71. Գործի մայր	82
72. Գործի մայր	83
73. Գործի մայր	84
74. Գործի մայր	85
75. Գործի մայր	86
76. Գործի մայր	87
77. Գործի մայր	88
78. Գործի մայր	89
79. Գործի մայր	90
80. Գործի մայր	91
81. Գործի մայր	92
82. Գործի մայր	93
83. Գործի մայր	94
84. Գործի մայր	95
85. Գործի մայր	96
86. Գործի մայր	97
87. Գործի մայր	98
88. Գործի մայր	99
89. Գործի մայր	100

20. Ֆերգինանգոլ.—Հավարուծ. և նրա սպուտն.	20 »
21. Ա. Գանելբեգ.—Լավ և ուշ, քան յերբեք (ազրո-պիյես)	20 »
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—Կտավատը և կանեփը	20 »
23. Ս. Լուկասից.—Անդրկովկասի տնտեսական զրությունը	15 »
24. Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետության անհատներին փայտեղեն բաց քողեկու համար (պաշտոնական)	20 »
25. Պրոֆ Ա. Գալանթ.—Կաթնատու կովի կերակրումը	30 »
26. Ա. Ա. Տրեֆոնով.—Ինչու պետք է ցելը շուտ անել	15 »
27. Ա. Բակունց.—Գալուստի զիկը (ազրո-պատմվածք)	15 »
28. Ա. Բակունց.—Կարտոֆիլի մշակութունը	20 »
29. Լ. Սուբբոսին.—Կովի դատը (ազրո-պիյես)	20 »
30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—Տրվականի	5 »
31. Խ. Տեր. Ներսիսյան.—Պաղատու ծառերի փաստառներն ու հիվանդութունները	25 »
32. Խ. Ավդալբեգյան.—Գյուղի հողաշինարարությունը	20 »
33. Մ. Բազի.—Տրակտորը (ազրո-պատմվածք)	15 »
34. Մ. Բազի.—Սորհրդավոր տրակտորներ (ազրո-զրույց)	15 »
35. Խ. Ավդալբեգյան.—Գյուղատնտես-անասնաբույժն ու իր ազրո-զրույցը	20 »
36. Ս. Ֆերգինով.—Տասը պատգամ անասնապահին—Բ. հրատարակութուն	20 »
37. Մ. Խանգազյան.—Մեղվարուծության գործնական ձեռնարկ	60 »

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ. ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Արամայիս Ֆերգինյան—Գյուղատնտեսության հերթական խնդիրներին
2. Պ. Գալանթյան.—Գոմաղրի նշանակութունը պարտադրան գործում
3. Խ. Տեր. Ներսիսյան.—Գոմաղրը (տպագրվում և Մոսկվայում)
4. Բուկով—Այժմ աղքատի կոմի և

ԳԻՄԵՆ, ՅԵՐԵՎԱՆ, Հողթողկոմատ, Հրատարակչ.:

Պետերս. Կենտրոնական լեզվաբանական րախանութներին, Գավիտրաժինն. ղին:



18
Համառոտ խառնուրդի համար

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

ՍԽԻ 1
ԳԽ 2



ՀՀ Ազգային գրադարան



NL0290185

23.050